

891.99

U-42

Kitabъ vaqtinde qajtarыпъз
Возвращайтъ книгу в срок

4941
~~379~~

360

371

61/II

82

Nесе дәлә вәрілпішдүг
Количество предыдущих выдач

891.99
Q-48

21 JUN 2005

9/19 NOV 2010
~~3379~~

Ա. ԱԶԱՐՈՎՆԵԱՆ

104

Պարունակած նիստ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական գրադարան
քաղաքացիության համար
ԻНՎԵՆՏԱՐԻՑԱՑԻ 1936 թ.


№ _____

12



Մատենացանց Ազգակ, թիւ 10

17645



Հայաստակութիւն
Արժուածական Գրավառապետութիւն


36938

104

1912
Կ. ՊՈՒ.ԲՍ

5.02.2013

18491



ԱՅՈՐԻՑ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԻԱԾՆԵՐԻՆ՝

ՈՐՈՇՔ

ՎԱՐԿԱՑ ՅԱՂԹՈՂՆԵՐԻ ԵՆ

Յիշում Է

ՀԵՂԻՆԵՑ



3577-2002

ՅԱՌԱՋԱՐԱՆԻ ՏԵՂ

Բանտում գրեցի այս գիրքը, որ իր վիրաւորւած հոգու ու
տանջւած իմացականութեան ըմբռտացման ձիչն է:

Աշխարհը հանդուրժում է բանտ ու կախաղան, դահիճ ու
բանտապետ, որոնց իր արիւնոտ ծոցում մնուցանում է ներկայ
հասարակական նղովւած կազմը:

Թո՛ղ այս գիրքն էլ մնի:

Մարդու հոգու մէջ հանգչող հին գաղանը տակաւին սուր
ժանիքներ ունի արդարութիւն և իրաւունք բզկտելու համար. իսկ
հասարակական խաւար խղճմուանքը կարօտ է թէկուզ մի հատիկ
ցուքի՝ բւնութեան դէմ ծառանալու համար:

Թո՛ղ այս գիրքն էլ մնի:

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ

ՄԱՐԻԱՆ ՃԱՆԿԵՐՈՒՄ

I.

ԸՆԿԵՐԱԿԻՑՍ

Մենք միասին ներս մտանք բանտի դռնից :
Նա՝ շղթայակիր ու հիւանդ, ևս՝ առանց շղթայի,
անդօր ու ցաւկոտ :

Շատ էինք քաղել կողք կողքի, ճակատներս փոշու -
ամպերի մէջ և աչքներս անմորէն դէպի հեռուն յառած :

Բանակի գուռը շառաչիւնով ծածկեց մեր յատերց .
Երկաթէ փականները մեռնող գաղանի ժանիքների պէս՝
կատաղի թափով իրար վրայ եկան, թանձր ու մղած
պատերը հեզնօրէն թարթեցին իրար կոյր աչքերով և
ծերուկ լռութիւնը տարտամօրէն յօրանջեց մեր գլուխ-
ներից բարձր :

Միասին ներս մտանք ու բաժանւեցինք :
Եւ վերջին անգամ ևս նայեցի իմ անձանօթ բաղ-
դակցի նեղիկ ու տենդոտ աչքերին, որոնց մէջ լուռ
լալս էին ինձ անցայտ երազներ. տեսայ նրա արծւային
քիթը որ վախտ ու դալուկ դէմքին իշխում էր վեհօրէն,
նրա անհանգիստ ու խղճուկ կուրծքը, ուր եռում էին
ցաւն ու նղուքը, քոյր օձերի պէս իրար գալարւած .
լսեցի նրա չոր, անհասանում հաղը, որ հոչւում էր որպէս
մուրճի ձայնը դատարկ դադաղի վրայ :

— Էյ, առաջ անցիր, ի՞նչ ևս քարացել :
Վերակացուն էր. իրաւունք ունէր. ևս կանգնած
նայում էի հեռացող ուղեկցիս, ականչ էի դնում նրա

շղթաների շառացին, որոնք կրծոստում էին նրա անդօր ոտները, կարծես դանդաղ լնթացքը փութայնելու համար:

Ի գուրք... նա գնում էր յամրաքաղլ ու համաչափ և երկաթէ օղակները զբնգում էին դժոխալին ներդաշնակութեամբ:

Զը գիտէի ո՞վ էր նա, ո՞ր տեղից էին բերում և ո՞ւր տանում այդպէս շղթայած: Դիտէի միայն, որ հոյակապ անկումի մի գերագոյն ժամին, նա դուրս էր շպրտել կեանքի հեշտ ու տափակ ուղից և այժմ անկամք ու անխորհուրդ՝ տարւում էր բանտից՝ բանտ, որպէս խորտակւած նաւի մի բնկոր գոռ ալիքների վրայ, որպէս մի խղճուկ փետուր կատաղի մրրկի չնչի տակ:

Հիւծախտով բոնւած՝ նա արդէն ընկճւած էր. բայց երիասարդ մարմնակազմը տակաւին յուսահատ պայքար էր մղում գարանամուտ մահւան դէմ, որ յամառօրէն աւերտում էր նրա կուրծքը և մէկիկ մէկիկ փետում նրա կեանքի փունջը: Ես բայց աչքով տեսնում էի այդ մահը, որ լիզում էր նրա կրտւնիները, խաղում էր շղթաների հետ, բարձրանում, սողում էր ոսկրտա թիկունքին, փափառմ էր ականջին անդրչիրիմեան գաղտնիքը, կամ կոացած նրա գունատ ճակատին՝ նայում էր տեհնդոտ աչքերին:

Ի՞նչ էր յանցանքը:

Զը գիտէի, և չէի ուզում իմանալ: Շղթաների շոխնդի տակ և բանափ պատերի մէջ յանցաւոր չկայ, այլ կայ միայն տառապող մարդ, որ լուռ սգում է իր զարհուրելի ճակատագիրը անդարձ կապւած չարիքին, ցաւին, այս նզովւած աշխարհում:

Շղթաների ձայնը լոեց և նա կորաւ իմ աչքից:

Ա.

“ԱՐԾԻՒՆԵՐԸ,,

... Դագաղը մեր լուսամուտի առաջից տարան: Մի վատ դագաղ, որի մեխերը դուրս էին ցցւած, որպէս պառաւ վհաւկի աստամները և փառած ասկասակները ճռճռում էին լավագին:

Դագաղը լավիս էր և գնում, և զիտէր, թէ ուր է գնում:

Բանտում համաճարակ էր...

Հարիւրաւոր տղամարդիկ, հուժիու ու մարմնեղ, շղթայւած ձեռք ու ոտքով, փակւած էին խուցերում և մահը յաղթական սաւառնում էր մռաց նրբանցքներում, չանգուսմ էր դռները ու մտնում, ուր կամննում էր:

Անդօր էինք ու պարտած:

— Դագաղը տեսա՞ր, ասաց ինձ կողքս կծկւած չոր, բարձրահասակ երիասարդը, մնոնո՞ւմ են, մնունո՞ւմ են... շարունակից նա ինքն իրան, ո՞ւր ուզի կը մանի անտէր ցաւը.. դուռը զրախց են փակում, ուզեն կը բացեն, ուզեն կը փակեն.. դուռը փակ էլ լինի՝ նա կը մանի, ցաւը ո՞ր անդից ասես կը մանի. գիտե՞ս, — նա ուս ցնցեց — գիտե՞ս, դագաղը ճռճռում էր, այդ դագաղը միշտ ճռճռում է, դէ՛ անտէր մնուելի վրայ մէկը լաց սլատի լինի, չէ չ...

Ու ևս տեսայ, թէ ի՞նչպէս նրա աչքերը լայնացան, ապա ըիբերը ծածկւեցին կոպերի տակ, գլուխը յետ ընկաւ, նա սկսեց խոխուող, զթունկները ծածկւեցին փրփուրով, ընկաւ յատակին ու սկսեց թրապասող:

Դիտէի, լուռնոտ էր, ամէն մ' ներվալին ցնցումից նւազում էր. ձեռքս կամացուկ ճակատին դրեցի, նա կամաց կամաց հանգստացաւ:

Թիկնաւէտու ու յաղթանդամ ծերունին, ժայռերի կողքից պրկւած մի լեռնական, անհանգստութեամբ ոտքի ելաւ, շղթաների շառաչիւնով գնաց դէպի լուսաւ մուտք, ապա յետ դարձաւ, վերսախն փուլ եկաւ խորի վրայ երխասարդ որդու կողքին, որ իրիկւանից պառակած էր տենդով: Հայր և որդի լուռ էին: Ծերունին ծընկարը զրկեց և հայեացքը յառեց հիւանդի աշքերին:

— Հու ու աշխարհ, վէրան, վէրան... ապա նա զլուխն օրօրեց ու մռմռաց ինքնիրան մի հին ասացւածք.

«Մի քնի՛ր աղւեսի ստերում,
«Թող առխւծը ենզ լափի.
«Մի անցիր նամարդի^(*) կամուրջով,
«Թո՞ղ հոսանիը ենզ տանի:

Ո՞վ էր «նամարդը» և ո՞վ խորամանկ աղւէսը, որ լեռների այդ արծիւներին հոգարտ ու աղատ բարձունքներից դաւաճանորին գահավիժել էր այս անդունդը, որի վրայ սաւառնում էր մահը միահնձան, ահաւոր...

— Ի՞նչ կայ դրառում, հայրի՛կ, հարցրեց հիւանդ երխասարդը:

Պատասխանի փոխարէն հայրը շարունակեց.

— Ցիշո՞ւմ ես տղաս,

«Աեսների ծայրին ամսերն են քառել արծիւների նետ, Ամսերի տակից, մրցի նման իգիրն է սլանում իր սեղ նժոյգով,

«Եւ կայծակները համբոյր են տալիս իգիրի նակտին, Ամսերի տակից ո՞վ է սլանում կայծակների նետ. . . »

«Ցիշո՞ւմ ես բա՛րա»:

(*) Գաւանան:

— Հա՛, հա՛, յիշում եմ, լսեց որդու նւազ ձայնը. յիշում եմ ու մեր սարերն այնպէս բարձր են. «Ամսկերի տակից ո՞վ է պահում կայծակների նետ. . .» կամացուկ երգում էր հիւանդ երխասարդը:

— Հէյ, Զա՞ն, Զա՞ն բալա, և ծերունին խորունկ հառաչեց ու թևով աչքերի արցունքը սրբեց:

III.

ԳԻՇԵՐԸ

Գիշերն եկաւ, բանտի գիշեր . . .

Խուցերը մեղմիւ տնքում են մի մութ ցուխ. ուստերը տեղահան եղած շարժում, գալիս են, աղմում են չորս կողմից: Նեզ է, ամէնքը քաշում, կծկում են ու շղթաներն էլ չեն շառաչում:

Մէկը զիտաւ դրանը. ո՞վ է միշանցքում. . .

— Դրանը դիսան, ասաց ծերուկ լեռնականը ապա ձեռքը տարաւ, չօշափեց որդու ճակատը.

— Տաք է, աւելացրեց նա, ի՞նչ տաք է ճակատը:

Երկու աչքեր փաղաստիցին զրան փոքրիկ բացւածքից, միայն երկու աչքեր, որոնք պաղ, տպակեայ բիբերով անթարթ նայում էին ներսը, կարծես մէկին փնտրելով. փոքրիկ լամպի բոցը երերաց այդ հայեացքի առաջ, տուերները խողացին պատի վրայ դիւական պարով, պատի ճեղքից մի մուկ դուրս վաղեց ու վայրկենապէս անյախաղու:

Ահա դարձեալ մէկն սնցաւ միշանցքով. ծանր քալւածք ունի, քսում է պատերին, կանգ է տանում իւրաքանչիւր դրան առաջ և նրա պաղ հայեածքից սարսավին է կամում զլուխների վրայ: Բայր ճպուները լսեցին, խաւարը միշանցքում պաշարւեց ու փափսաց. . . ում է լնտրում այս գիշեր:

Դագաղը յետ եկաւ, նա այժմ ճռոռում է ու անքորում
միաժամանակ, բեռը ծանր է:

— Մէկն էլ ատրան, մնոնում են, մնոնում են,
կրկնեց լուսոտ ընկերակիցս, ու նորէն սկսեց դողալ: Ես
բոնեցի նրա ձեռքը, նայեցի աչքերին քնքշութեամբ, նա
ժպտաց շրթունքներով, աչքերը մնացին չուած. ասես
նա մի բան էր տեսնում, որ ինձ անմատչելի էր:

Նա կուցաւ իմ ուսին ու փափսաց ականջիս.

— Սա կը մնոնի, հա ա՞... նա ցոյց էր տալիս
Հիւանդ երիտասարդին:

— Ոչ, նա կը լաւանայ, պատասխանեցի անտար-
բեր եղանակով:

— Զէ՛, նա կը մնոնի... մնաք էլ... ևս էլ. դու
էլ... բոլո՞րս, բոլո՞րս...

Վերջացրեց նա. գլուխը քաշ ընկաւ կրծքին:

Ծերուկ լեռնականը մնջեց: Հիւանդ երիտասարդը
տապակւում էր տենդի մէջ, թաւալ էր տալիս, զառան-
ցում.

«Լեռների ծայրին... արծիւները... ամպերի տու-
կոց իգիթն է սրանում... կայծակները... ո՞վ է պանում
— էյ ձիս տւէք, ձի իս...»

Հիւանդը ճչաց. տենդի մէջ երազում էր նժոյդ ու
լեռներ, անհունն ու ամպերը: Հայրը ցնցւեց նրա ձիչից,
կուցաւ որդու երեսին, կրկն ձեռքը ճակատին դրեց,
ապա յուսաբեկ յետ քաշեց, գլուխն օրօրեց,

— Հէյ վախ, հէյ վախ, նամարդ դուշման, ասաց
նա:

Եւ դագաղը մեր լուսամուտի առաջից տարան. նա
և ճռոռում էր, և անքորմ. բեռը ծանր էր, նա լալիս էր
ու հեռում...

IV.

ԱՐԵՒԻ ՏԱԿ

Բակում այն օրը շատ արև կար, չողերը ժպտում
էին պայծառ, սրտապարար ցողքերով. բանտի զոյգ նի-
հար կատուները դուրս էին ընկել ո՞վ գիտէ, ո՞ր ներքնա-
յարկից արեւ չնչելու: Նրանցից մէկը խաղում էր մի
հիւանդ թիթեռի հետ, որ կեանքում յոզնած ու մոլոր-
ւած, բանտի բախն էր ընտրել գերեզման. միւսը, մէջքի
վրայ պառկած՝ աշխատում էր բունել արեւի չողերը, և
երկումն էլ ժպտում էին...

Արհեստանոցի ցածրիկ կառւրի վրայ մայր ճնձուկն
աշխատում էր թոցնել իր փոքրիկ ձագերին ու ճուռ-
զում էր, ցատկրուում, ցոյց ատլիս փոքրիկներին կապու-
տակ անհունը, հրապուղիչ, ազատ: Զագուկները թրագր-
ուում էին ու մնում տեղնուտեղը: Նրանք չին համար-
ձակում թեակոխներ անեզր տարածութիւնը, ուր անհու-
նի սարսափն աւելի հզօր էր, քան աղասութեան սէրը:

Խուլ զիմողին, մումոց, ապա չորս կողմից շղթա-
ների համատարած շառաչիւն: Դոները բացւեցին: Զրօ-
սանքի ժամն էր. իրար հրճիկով բանտարկեալները դուրս
թափւեցին բակը: Բոլոր աչքերը դէպի երկնք էին
թարթում. բոլորը ցատկելու, ճչալու, հարւածելու խե-
լագար տենդով էին թռնած:

Զագուկը վար ընկաւ պատից. մայրը խուճառի ճի-
չերով վրայ սղծաւ. պայուններ էր գործում նրա շուրջը,
լալիս էր, կանչում, աղերառմ, որ նա թափ ունի, վե-
րսալն վեր ենի. բակում այնքան շատ էր վասնգը,
կատուներ, մարդիկ... Եւ կատուները մէկէն դէպի ճա-
գուկը ցատկեցին. Նրանց յևակեց բանտարկեալները.
շղթաների միահամուռ չոխնդից՝ կատուները փախան

թողնելով թունակին, որ մայրն ի դուր էր աշխատում վեր համել:

Եւ բազմութիւնը քրքջում էր խելայեղօրէն. մարդիկ ծիծաղում էին որ կատուները փախան, ծիծաղում էին որովհետև մայր ճնճղուկը չէր կարաղանում իր ձագին վեր համել, աղատել: Եւ յանկարծ ծիծաղը փուեց, լայնաշաւ, դարձաւ հսկայական, անմիտ մռնչիւն հարիւրաւոր կրծքերից, երբ կատուներից մէկը գաղաղողի թռիչքով խեց ձագն ու փախաւ, մռնչեռ մայրը լայգին ճչում էր ու պատցաներ գործում:

.... Զորս հոգի էին կծկւած մի անկիւնում ու նրանցից մէկը՝ մի պատանի, մաղմիւ երգում էր: Երգիշը նո՞ր էր բանտարկւել և աղատ կեանքի ժափար տակաւին չէր խամրել շրթունքներին: Ընկերները զիսիկոր լում էին և վերակացուների երկիւղից նա երգում էր այնքան զգոյշ ու մեղմ, որ հնչիւնները լաւում էին որպէս շնչիւնը զիսիւուի՛ ուուի տերենների մէջ:

Ուսկինդիմները բազմացան, շարժում, քրքիչ, շրթանների չսինդ լուցին. իշխողը պատանին էր իր երգով. նրա շուրջը բակ կապեցին վերակացուների հայեացքից թագցնելու համար:

Երգը շատ էր զրաւիչ ու արեւ շատ էր ժապտուն:

Աղատ, կախարդական աշխարհն էր երգում պատանին, ուր երաշներն են վառլուուն, որպէս գողարիկ թիթեռները ոսկեթեւ. սէրն էր երգում, ծաղիկ, գարուն կանաչներ, և անհունի մուգ կապոյտը խնկաւէտ: Հովիտներում արծաթաձայն վաւկներն էին կարկաչում, անտառների թաւուաններում թռչունները դալլալում:

Երգի հմացիչ շեշտերով աղատ ու եռուն կեանքը վեհօրէն փթթեց բոլոր այդ մարած հայեացքների առաջ և անտառների ու դաշտերի բուրմունքը լցրեց բանտի

մթնոլորտը: Շղթայակիր ու մռաղ մարդիկ, կիսախուփ, երազուն աչքերով օրօրւում էին երանաւէտ յնորքների մէջ և խճնթ հովիտի չնչով տարւում էին դէպի անհունը:

Եւ լաւ էր, լաւ էր այդ բոլորը

Ու բանտի պատերն իջան, իջան, գեանին հաւասարւեղին. թարմ զովացուցիչ մի շունչ դրսի աշխարհից եկաւ զարկւեց բոլոր ճակատներին. գլուխները բարձրացան և հեռում էին ու լողում ոսկէ շողերի մէջ:

— Ասա՛, ասա՛, մրմիջում էին չորս կողմից:

Եւ երգը հոսում էր, որպէս աղբիւրը կարկաչիւն և հոգիները սաւառնում էին հեռու, հեռո՛ւ . . .

V.

ՔՐՔԻ ԶՆԵՐ

Բակի խորքում հիւմանդանոցի դուռը բացւեց. այն տեղից գուրս բերին մի զագաղ, այնուհետեւ մի տախտակ, յետոյ էլի, յետոյ էլի մէկը, քանի՛մ. են և իւրաքանչիւրի վրայ մի դիակ: Համաճարակը աւերած էր գործել:

Երգը լոեց: Բանտի պատերը վերստին բարձրացան աւելի զագան ու ահաւոր:

Բոլոր հայեացքները դարձան դէպի մեռեները, դագաղի մէջ մեռելի ցցւած ճնկները բարձր էին պահել կափարիչը. էին յոգնած դագաղը օրօրւում էր ու լալիս, տախտակների վրայ պառկածներն օրօրւում էին աջ ու ձախ, աջ ու ձախ . . .

Նայեցի առաջին դագաղին. իմ ձամբի ընկերակիցն էր . . . նա էլ չէր հազում, շղթայ չունէր, աչքերի մէջ երաղ չէր լալիս, միայն սղմւած շրթունքների վրայ քարացել էր մի շատած ու հզօր խօսք: Պարտածներ էինք

և մենք, և նա, և տախտակների վրայ տարւող գիտեները, որոնք գնում էին անդարձ լուծուելու մեծ նիւթի մէջ: Եւ բոլորի համար մեն-մենակ լալիս էր հին, յոզնած դադաղը. լալիս էր ու գնում դէպի գերեզման:

Մեռեների թափօրը ծածկւեց ու յանկարծ հակառակ կողմից յայնուեց մի պատգարակ — ծերուկ լունականի որդուն էին տանում հիւանդանոց: Հայրը յետեւից բառաշում էր ցուլի պէս, առաջ էր նետում աշխատելով խետ խել զառակին, իր մօտ պահել. «Այս աեղ կ'ըսպանին նրան, կ'սպանին»... ճշում էր նա. ի զուր վերակացուները յիս մղեցին նրան և սրատգարակը ծածկւեց: Ծերունին ձեռքերով ճակաաը բռնեց՝ քարացած մնաց փակում. կատուն մօտեցաւ. խաղում էր նրա ոտների հետ, քսքսւում, մոռում. ծերունին յանկարծ խլեց նրան, ու կատաղօրէն չսրբեց հեռու. «Գնա՛ Սատծուն գանդա՛տ» մոնչած նա: Կենդանին ընկաւ գետին, փըշը ըւած, արխանկայ, ապա սողալով, աղաղակով քաշւեց պատի տակ: — Տօ՛, մեռելի ծնինելն ի՞նչպէս ցցւած էին...

Ո՞վ ասաց... մինչեւ այդ լուռ բազմութիւնը յանկարծ նորէն քրքջաց. ծիծաղ չէր, աղ խելագար. ջղայնորէն սանմիա հոնդիւն. հեկեկում էին, ու ոռնում և աչքերից ցայտում էր արցունքը, որովհետեւ մեռելի ծնիներ ցցւած էր... իրար անցան. շղթաների չոյնդը վերատին հնչեց, քաշքում էին իրար, ցատկատում ու հրճում, որովհետեւ դիսկներն օրորուում էին տախտակների վրայ:

Եւ մահը քրքջում էր նրանց հետ խօլ, աիրական չհշտերով:

ՀԱՅՐԸ

Նրա միրուքը ճերմակ էր՝ որպէս մատաղ կարապի թև ու գլուխը՝ որպէս զարնանը նոր ծաղկած կեռաւնի:

Աչքերը թարթում էին դանդաղ ու նրանց նւազ, յոզնած լուսը հաղիւ պլպում էր թանձր յօնքերի տակ՝ լինչպէս ամբողջ գիշեր վառ թողած զոյդ լապտեր, որոնք լուսաբացին մեղմիւ հեռում են ու հանդիսա վնարում:

Սեւ մորթէ զլիսարկը՝ ծանր սեւ հոգսի պէս իջնում էր մինչեւ յօնքերը և մազէ չուխան, խունացած ու անձեւ՝ թիկունքն էր ծեծում: Քաղում էր կորացած, այս պատճառով չուխան յետեւից բարձրացել էր մինչեւ ոտների կէսը, մինչդեռ առջեւից փէշերը քաշ էին լնկել սրունքների վրայ, որպէս զարկւած թռչնի թեր:

Քրախնքի մարդ էր:

Թանձր զլիսարկի եղբերը և չուխայի թիկունքի գալարուն մոխրագոյն գծերը վկայում էին մի երկար ու չարքաշ կեանք: Ծեր զլուխը դողդողում էր ու հեռուից կարելի էր կարծել թէ նա պարանոցի շարժումով անդաշար ուղղում է զլիսարկը:

Զեռքին երկար գաւաղան ունէր, անտառից նոր կտրած, որի վերին ծայրը բարձրանում էր մինչեւ ծերունու ուսը:

Աշնան թղարտ ու գաման երկինքը անհասկանալի ցասումով վերից նայում էր նրան և կատաղի քամին փոշիով լցնում էր աչքերը, ծեծում նրա երկար միրուքը: Երբ քամին խիստ էր զօրտւմ, նա մի վայրկեան օրօրուում էր, փայտը դողում էր ձեռքին. նա զլուխը ցնցում էր, ձախ ձեռքով՝ բարձրացնում էր չուխայի

փեր, սրբում էր աչքերի փոշին ու արցունքը, ու կըր-
կին քայլում լայն, ամայի փողոցով:

Գնում էր արագ արագ, բայց քաղերն այնքան
մանր էին, որ չատ քիչ տարածութիւն էր կտրում և
յետոյ քամին խանդարում էր:

Նա ասես չը նկատում ո՛չ քամին, ո՛չ փոշին և ո՛չ
մռայլ երկինքով:

Քայլում էր ու ինքնիրան խօսում հեալով:

Արտասանածը միշտ նոյն բառերն էին՝

«Կը ներեն... ի՞նչպէս չեն ների...»

Հաւատացած էր, կը ներեն որդուն, որին երկու
օր առաջ դատապարտել էին մահւան: Գիտակ մարդ-
կանց ինդրով նա դիմել է, ինդրերով փոխել մահւան
դատավճիռը: Նա չգիտէ, ի՞նչ է գրւած, ո՞ւմ է ուղ-
ղրւած իր խնդիրը: Գիտէ միայն, որ հեռու մեծ քաղա-
քում մի մարդ կայ, որ ամենակարող է, որի կամքից
կախւած է ներել կամ սպաննել ում կամենայ. և ծերունին
հաւատացած է՝ որ նա, այդ ամենազօր մարդը իր որ-
դուն կը ների, կ'ազատի կախաղանից:

«Կը ներեն... ի՞նչպէս չեն ների...»

Եւ այդ խօսքերը կրիմում է խորտուկ հաւատով ու
անվերջ:

Այդ հաւատաը հիմքեր ունի, համոզիչ, հաստատուն
հիմքեր, որ ծերունին ինքն է գտել, իր կեանքի փորձի,
իր խաստութիւն ծոցից դուրս քաշել սեփական դատո-
վո՞վենամբ: Պիտի ներեն, որովհետեւ... որովհետեւ...
քաշաբէս թէ կենդանի, առողջ մարդուն առնեն, կախեն,
սպաննեն... մարդը կայ... ու յանկարծ չկայ... մտմը-
առունչեն ծերունին, և մի մութ բան, անորոշ ու անձեռ
չքիւնալ, վիառում է նրա խղճուկ ուղեղի վրայ, մշուշը
որապետմէ: միտքը, գլուխը դողդողում է...

Առաջվակայն անմիջապէս վերակառմ է կակծացող, երե-
պեան թոքի թելը, ու շարունակում է իր խղճուկ յոյսի
պիտիուն շնչքներտել. կը ներեն... ախր ինքն է խընդ-

րել, ջարդւած, տանջուած ծերուկը... սպիտակ մազերն
աշխարհում մի բան արժեն... ախր եօթանասուն հինգ
տարեկան է. թագաւորին քանի տարի հարկ է տւել,
կոռ ու բէդեառ քաշել, թիկունքով բանակի համար հաց
ու ջուր կրել. ախր տղան էլ ծառայել է, զին-
ւոր է գնացել, ու լաւ է ծառայել: Յետոյ այդ տղան
երեսուն տարեկան է, բայց ու բուսաթը, թիկունքը, աչ-
քերը, սարի պէս տղամարդ է, ում ձեռքը կը բարձ-
րանայ... թո՞ղ նայի՞ն...

Վերջին հիմունքը նրան թւում է՝ ամենին զօրա-
ւոր... այնպիսի տղամարդին ի՞նչպէս կախել...

«Կը ներեն... ի հարկէ կը ներեն...»

* *

Երէկ այնտեղ էր՝ բանտում:

Ասացին՝ գեռ սղատասխան չկայ, վաղն արի:

Ծերունին երկար ժամանակ չէր հեռանում, միւածի
պէս քարացել էր նոյն տեղում, փայտին յենած ու զիսա-
բաց բանտապետի առաջ.

— Եղուց սղատասխան կը լինի, այնպէս չէ, աղա,
քեզ մատազ:

— Հա՛, հա՛, ծերուկ, կը լինի, աէ հիմայ գնա՛:

— Յերանիդ մնոնիմ — ու ծերունին ժպտաց —
գիտե՞ս աղա, ի՞նպէս տղայ չի էէ... դու նրան ի՞նպէս
մի տես բանտի մէջ, դէ գժար է, ամա էլի, ա՛յ, կ'ուզե՞ս,
տան ընտիք տղամարդ դրկիր, շարիր ա՛յ էն բակում,
թող նրա վրայ գան, մինակ շղթան ոտքերից հան, ու
տես... սարի կտոր է, ասլան... ա՛յ ներու մեր գեղի...

Ոգեգորած, ժպտուն ծերունուն ընդհատեց բանտա-
պետը.

— Կը ներեն, ծերունի, կը ներեն. ու բանտապետը
ժպտում է այն անհրապոյր ժպտով, որ միայն պաշտօնեա-

ներն ունին, և որից մարդ միշտ սարսռում է։ Ծերունին այդ չի նկատում։ Նա երջանիկ է այդ ժամանվ, նա քաջալերւած է։ և ուզում է ասել, պատմել իր որդու մասին, ասես դրանից կախուած լինի որդու բաղդը։

Ծերունին անշարժ է, դէմքը լուսաւոր, յուսալից։ ինքնամոռաց յափշտակութեան մէջ, նա ասելիք ունի։ թո՞ղ լսեն ամէնքը, թէ ի՞նչ է նրա որդին։ նա մի քայլ առաջացաւ, բանտապետը նրան չի նայում, չ լսում, և մի անսովոր քնքու.չութեամբ, որի գաղտնիքը ինքը միայն գիտէ, դուրս չի անում այս վատաբաղդ հօրը, որ եկել է, իր ծեր ձեռների ուժով կախաղանի թոկը յետ քաշելու, փրկելու իր զաւկին։

Գիտմու, աղա, աղաս անմեղ է, ասում է նա աւելի բարձր ձայնով աւելի սրտապնդւած, անմեղ է ասում եմ, ինչպէս նորածին մանուկ... նա սուս չի ասի... վկայ է Աստաւած... ախր էն անտէրը որ գըռագում է, ո՞վ չի փախչի — ծերունու խօսքը ուումբի մասին է — դէ, նա էլ փախել է խեղճ տղաս, փախել է ու բռնել են... թէ մեղք ունի, թող Աստաւած դատի, ախր Աստծու դատաստան էլ կայ, աղա՛, Աստծու դատաստան... եօթանասուն հինգ տարեկան եմ, էն մէկ տղան է... մազերս տե՛ս... ծերունու ձայնը դողդուց, ու չկարողացաւ շարունակել։

— Հա, հա, հիմայ գնա՛, ու բանտապետը դարձեալ ժամանում է։

Ծերունին սակայն անշարժ է, նրան միշտ թւում է, թէ բոլորը չի ասել։

— Ո՞ւր գնամ... ո՞ւր կորչեմ... Քրիստոսի պէս չար մեխերով խաչեցին ինձ բանտի պատին... սարի պէս զաւակս... նա վերստին ընդհատեց իր խօսքը, զրսից յանկարծ լսւեց շղթաների շոխնդը, որ ճշացող բողոքի

պէս ներս խուժեց լուսամուտից, մահասարսուռ, աղանդակ իլհւէջներով։

— Սչքերս դուրս գայ, վշշաց ծերունին, ձեր ծընողների աչքերը կուրանան... ախր ամէնքն էլ հօր ու մօր զաւակներ են... նրա աչքերը թացացան, ու չուխայի փէշով սրբեց։

Բանտապետի նշանով վերջապէս վերակայուները նրան դուրս տարան. և երբ յետ եկան դուռը փակելով, իրար նայեցին ու գլուխներն օրօրում էին։

Սյա բոլորը երէկ էր։

Այսօր նա գնում է վերստին և հաւատացած է, որ փրկարար հեռագիրն արդէն ստացւած է։ Բանտապետն ասաց, որ՝ կը ներեն։

«Կը ներեն, ի՞նչպէս չեն ների... ախր Աստւած կայ, իր ո՞ր մեղքի համար այս ծեր օրերին, այս զուլումը...»

Քամին կատաղած շամ պէս վնդստալով զօրում է, փակում է նրա առաջը, մումուռում է, հաջում. թանձր փոշին լցում է աչքերը, ու պղտոր արցունքի հետ շաղախուռմ. նա օրօրում է գլուխը, դողդողում, մի վայրկեան կամգ առնում, հեւում է ու գնում է, հա՛ գընում...»

Եւ շրթունքները մրմիջում են նոյն բառերը, որ նա անդադար կրկնում է, ասես վախենալով մոռանալ։

«Կը ներեն...»

* *

Բանտապետն այսօր աւելի անուշ զէմք ունէր, աւելի ուշաղիր էր ու քնքոյչ, միայն ժպիառ չը կարողանում երկար սղանել շրթունքներին, և երկու յօնքերի արանքում մի անհաճոյ կնծիռ կար։

— 22 —

Ծերունին գլխաբաց կանգնած էր նոյն ամեղում,
փայտը մի ձեռքին և գլխարկը միւս :

Լուռ էին :

Բանտապետը նայում էր սեղանին, ասելիք ունէր
և ձեւակերպում էր դժւարութեամբ : Ծխեց, պապիրոսը
ցած դրեց մոխրամանի վրայ ու ծերունին նայում էր նրա
ոլորապոյտ ծխին, որի արմատը հաստ էր, քանի գնում էր
դէպի վեր, բարակւում ու ցնդւում էր : Բանտապետը աջ
ձեռքով խաղում էր առաջի թղթի հետ, ձախ ձեռքի
մասներով ջղաձգաբար արորում էր սեղանի կարմիր
ծածկոցը : Նա կրկին վերցրեց պապիրոսը, մի կում քա-
շեց ու կրկին վար դրեց : Լուռթիւնը շարունակւում էր :
Կողքի սեղանի առաջ նստած երիտասարդ գրագրի գրվ
ձայնն էր լսում միայն :

Լուսամուտի վրայ յայսնեց յանկարծ մի կարմրա-
լանջ աղաւնի, ու սկսեց կացել հացի փշանքները : Ծե-
րունին այն էլ տեսաւ ու մտածեց՝ աղաւնին խեր է,
լաւ նշան է, ու վերսալն նայեց բանտապետին, նրա
աչքերն էր վնարում :

Եւ աչքերը, դարձեալ լաւ էին, ինչպէս երէկ .

— Է՞ն, ծերուկ, ինդրիդ պատասխանն եկաւ,
ասաց վերջապէս բանտապետը, վճիռը փոխել են... բայց
ափսոս, ուշ...

— Եկա՞ւ, բացազնչեց ծերունին, առանց լսելու
վերջին բառերը, փա՛ռք քեզ Աստւած, ու նա ձեռները
երկինք տարածեց :

— Հա՛, եկաւ, բայց ափսո՛ս, ուշ...

— Ո՞ւշ... ի՞նչ ուշ, աղաջա՞ն, չին կիմայ տէրու-
թիւնը, մէկ չէ՞ մի օր շուտ կամ ուշ, փոփոխել են վճի-
ռը, մնացած՝ Աստւած...

Վերսալն լուռթիւն տիրեց. գրագիրը ցած թողեց

գրիչը, յետ ընկաւ աթոռի թիկունքին, լայն չունչ առաւ,
ու նայում էր տեսարանին :

Բանտապետն այլեւ չէր ժպտում. նա գլուխը կա-
խեց, դուրս քաշեց սեղանի արկով, ու թղթի մի փոք-
րիկ փաթոյթ հանեց այն տեղից :

— Այ այս փողն էլ տղադ տեղ քեզ յանձնելու ու էլ
ուրիշ բան չասաց :

Ծերունին մեքենայարար առաւ դրամը՝ երեք ըուբ-
նի, քսան և հինգ կոպէկ արծաթ, սղմեց ձեռքի մէջ,
ու սպասում էր :

Լուռթիւնն այս անգամ աւելի ծանրացաւ. բանտա-
պետը ձեռքով իր օձիքը քաշքաց լայնացնելու համար
ու պարանոյն էր տարուքերում. գրագիրը ոտքի ելաւ
ու մօտեցաւ լուսամուտին, որ տեղից կարմրալանջ աղաւ-
նին թռաւ, սենեակի մէջ քանի մի անհանգիստ պայտա-
ներ գործեց ուժգին թրպանցով, ու դուրս սրացաւ :
Շղթաների շոխոցը նորից եկաւ հեծեծանքի
պէս զարդեց պատերին, գալարւեց առաստաղի տակ ու
լսեց :

Ծերունին ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում,
սպասում էր, միշտ ակնապիշ բանտապետի աչքերին նա-
յելով, որոնցից վեր յօնքերի արանքում սա չարագուշակ
կծիկը թանձրանում էր հա թանձրանում :

— Օքնք է, ծերուկ, ասաց վերջապէս բանտա-
պետը, օքնք է, ոչինչ չես կարող անել... միր բանն
էլ դժւար է... ի՞նչ արած, օքնք մի ծառաներ ենք...
այս գիշեր ամէն ինչ վերջացաւ... ինդրիդ պատաս-
խանն ուշ հասաւ... ափսո՞ս...

Այս անգամ այլեւ լուռթիւն չէր միայն, որ կախ-
եց գլուխների վրայ, այլ մի ուրիշ բան, անիրեւոյթ,
ահաւոր ու կինդանի, որ չնչում էր, հեռում էր, և նրա

հեքը զարկւում էր բոլորի դէմքերին, որ նրանց գանկերն էր ծեծում ծանր մուրճով փշելու չափ:

Ծերունին այժմ նայում էր բանտապետին, բայց զայն աղեւո չէր ճանաչում, չէր տեսնում, նրա աչքերի առաջ անհունն էր բացւել, մի սեւ անդունդ. «ալատապախանն ուշայաւ»... «օրէնք է»... «այս գիշեր ամէն ինչ վիրջացաւ...»... այս բառերը դառնում էին նրա զլխում, ձայն էին տալիս, հնչում նրա տկանշներում, նոր խմաստ ստանում ասես կայծակի փայլով: Ծերունին ոչ միայն լսում էր պարզ ու մեկն, այլ բաց աչքով տևանում էր այդ զարհութելի բառերը, որոնք մի մի շիկացած մնախի պէս օդի մէջ պատցաներ դործելով, գալիս, թաղում էին նրա գանկի մէջ, ուղեղը խոռնում: Եւ յիտոյ, ձեռքի փաղը՝ և «օրդիդ տւեց... ուրիշ բան չասաց...»

Նա զգում էր, ինչպէս սառը մնասաղը կամաց կամաց թաղւում է իր ձեռքի միտերի մէջ, զգում էր և անշկարող էր ձեռքը բաց անել ու պղմում էր, ողմում ոսկորները փշելու չափ:

Եւ զարհութելի ճշմարտութիւնը, ինչպէս մի սեւ, ահագին օծ կամաց կամաց փուլում էր նրա աչքի առաջ, ահա սեւ ձեղքից բարձրացաւ նախ օծի գլուխը, ապա մէջքը, պոչը, հուռը, ինչ երկար է, անծաղը. և նա հետեւում է դէպի ծերունին...

Եւ օձ ժպտում է...

Բանտապետը գլուխը բարձրածրեց, փորձեց ժըպտալ, բայց յանկարծ տեսաւ, թէ ի՞նչպէս ծերունու աչքերը կամաց կամաց լայնանում, փուլում են, ասես ամբողջ դէմքու բոնքու համար. տեսաւ, ի՞նչպէս յօնքերը բարձրացան դէպի ճակատը. ու հայեացքի մէջ զալարւող ահագին սարսափը մութ ու դաժման, ինչպէս խուրի մէջ առանց լոցի մխացող կրակ:

Ու բանտապետը գլուխը քաշ ձգեց.

— Որդին, ճչած ծերունին խռապու, լնկաւած ձայնով, այն աեղ իմ... որդին... եւ չը կա՞յ... նա ձեռները տարածեց դէպի բանտի խորքը, երերաց, ու փայտը դէմ տւեց.

— Օրէնք է... ճար չկայ, եղաւ պատասխանը. օձը փաթաթւեց, ծերունին թրպրառում, դողլողում էր նրա պաղ, զգելի օղակների մէջ. դէմքը գունառուեց, սպիտակեց ինչպէս ճերմակ միրուքը. աչքերը մեղմիւ փակւեցին. «Բալաջան», մրմինած նա նւազած ձայնով ու ընկճում էր, երբ զրագիրը բանեց նրան, յետոյ բանտապետի կանչով երկու վիրակացուներ ներս մտան, նրան թեւերի տակ առան, կամացուկ դուրս տարան:

Դուռը շառաչիւնով փակւեց:

Ծերունին մննակ ու խորտակւած՝ փողոցումն էր:

* *

Քամին սաստիացաւ. նա մունչում էր ուժգնօրէն. վերևում՝ ամպերն էին վաղում նրա թափի տակ իրարհրելով, արորելով, որպէս անծայր, խօլ կարաւան. ներքեւում՝ աւաղախառն, թանձր փաշին էր բարձրանում լեռնանման կոյտերով, ապա ցրիւ գալիս, ծառալուում արար-աշխարհի վրայ, որպէս անէծք: Ու չորս կողմից պատ ու քար, ճեղք ու խոռոչ, ծառեր ու սիներ, վայրագօրէն ներդաշնակ ճշում էին, անքում, սուլում հին անէծքի դժողովակ երգը քատմնեցուցիչ եղեւէջներով:

Եւ այս աւերած երինքի, փոշու այս գորշ մրրիկի տակ մինակ էր ծերունին, լքւած, ոչնչացած, հազար կողմից բարձրացող զիւական գրքիչների մէջ:

Մէջքը բանտի պատին տւած և ձեռնափայտին յեւած, նա դեռ կանգնած էր արծաթ զրամները պինդ սղմած ձեռքի մէջ:

հեքը զարկւում էր բոլորի դէմքերին, որ նրանց գանկերն էր ծեծում ծանր մուրճով փշելու չափ :

Ծերունին այժմ նայում էր բանտապետին, բայց զայն աղեւո չէր ճանաչում, չէր տեսնում, նրա աչքերի առաջ անհունն էր բացւկ, մի սեւ անդունդ . «պատասխանն ուշացաւ» . . . «օրէնք է» . . . «այս գիշեր ամէն ինչ վերջացաւ . . .» . այս բառերը դառնում էին նրա գլխում, ձայն էին տալիս, հնչում նրա ականջներում, նոր խմաստ ստանում ասես կայծակի փայլով : Ծերունին ոչ միայն լսում էր պարզ ու մեկն, այլ բաց աչքով տեսնում էր այդ զարհութեղի բառերը, որոնք մի մի շիկացած միսի պէս օղի մէջ պատուաներ դործելով, գալիս, թաղւում էին նրա գանկի մէջ, ուղեղը խառնում : Եւ յևոյ, ձեռքի փաղը՝ և «օրդիդ տւեց . . . ուրիշ բան չասաց . . .»

Նա զգում էր, ինչպէս սառը մնտաղը կամաց կամաց թաղւում է իր ձեռքի միսերի մէջ, զգում էր և անշկարող էր ձեռքը բաց անել ու սղմում էր, սղմում ուկորները փշելու չափ :

Եւ զարհութեղի ճշմարտութիւնը, ինչպէս մի սեւ, ահագին օձ կամաց կամաց փուլում էր նրա աչքի առաջ . ահա սեւ ձեղքից բարձրացաւ նախ օձի գլուխը, ապա մէջքը, պոչը, հուռը, ինչ երկար է, անծայր . և նա հետեւում է դէպի ծերունին . . .

Եւ օձը ժպառում է . . .

Բանտապեաը գլուխը բարձրացրեց, փորձեց ժըպտալ, բայց յանկարծ տեսաւ, թէ ի՞նչպէս ծերունու աչքերը կամաց կամաց լայնանում, փուլում են, ասես ամբողջ դէմքը բռնփլու համար . տեսաւ, ի՞նչպէս յօնքերը բարձրացան դէպի ճակատը . ու հայեացքի մէջ գաղրւող անագին սարսափը մութ ու դաման, ինչպէս խաւարի մէջ առանց բոցի մխացող կրակ :

Ու բանտապեաը գլուխը քաշ ձգեց .

— Որդին, ճշած ծերունին խոսպոտ, լնկմւած ձայնով, այն աեղ իմ . . . որդին . . . էլ չը կա՞յ . . . նա ձեռները տարածեց դէպի բանտի խորքը, երերաց, ու փայտը դէմ տւեց .

— Օրէնք է . . . ձար չկայ, եղաւ պատասխանը . օձը փաթաթւեց, ծերունին թրագրառում, դողլողում էր նրա պաղ, զգելի օղակների մէջ . դէմքը գունառուեց, սպիտակեց ինչպէս ձերմակ միրուքը . աչքերը մեղմիւ փակւեցին, «Բաղաջան», մրմնջած նա նւազած ձայնով ու ընկճում էր, երբ զբագիրը բռնեց նրան, յետոյ բանտապեաի կանչով երկու վիրակացուներ ներս մտան, նրան թեւերի տակ առան, կամացուկ դուրս տարան :

Դուռը շառաչիւնով փակւեց :

Ծերունին մննակ ու խորտակւած՝ փողոցումն էր :

* *

Քամին սաստկացաւ . նա մւնչում էր ուժգնորէն . վերևում՝ ամպերն էին վազում նրա թափի տակ իրարհրելով, արորելով, որպէս անծայր, խօլ կարաւան . ներքեւում՝ աւաղախտան, թանձր փաշին էր բարձրանում լեռնաման կոյտերով, ապա ցրիւ գալիս, ծաւալուում արար-աշխարհի վրայ, որպէս անէծք : Ու չորս կողմից պատ ու քար, ձեղք ու խոռոչ, ծառեր ու սիներ, վայրագօրէն ներդաշնակ ճշում էին, տնքում, սուլում հին անէծքի դժնդակ երգը քատմնեցուցիչ եղեւէջներով :

Եւ այս աւերած երկնքի, փոշու այս գորշ մրրիկի տակ մինակ էր ծերունին, լքւած, ոչնչացած, հաղարկողմից բարձրացող զիւական քրքիչների մէջ :

Մէջքը բանտի պատին տւած և ձեռնափայտին յենւած, նա դեռ կանգնած էր արծաթ դրամները պինդ ողմած ձեռքի մէջ :

Նա դողդողում էր, ծեր, ոսկրոտ մարմինը ցնցւում,
զարկւում էր պատին, հաստ ատամների յետին մնա-
ցորդները ծնօաների հետ արորում, փշրում էին իրար:

Կանգնած էր, ու ոչինչ չէր լոռմ, ոչինչ չէր անս-
նում և ոչինչ չէր միշում: Աշխարհից դուրս էր . . .

Քամու մի ուժեղ հոսանք խլեց նրա գլխարկը,
շալրդեց փոշիների մէջ, արորեց ու քշեց հեռու. գլուխը
անյուսօրէն կռացաւ կրծքին, ճերմակ մազերը խճճւած,
փուեցին ձակատին, իջան մինչեւ աչքերը. փայտը աջ
ձեռքից ընկաւ ու դրամը՝ ձախ ձեռքից. մատերի
արանքից նախ վար սահեց տասն և հինգ կոսէկանոցը
ու թաղւեց փոշու մէջ, ապա հետզհետէ միւս արծաթ
փողերը մէկիկ մէկիկ վար ընկան: Ծնկները ծալւեցին.
Նա կամաց կամաց սողաց պատի երեսից ու փաւ գե-
տին. գլուխին իջաւ, իջաւ մինչեւ հողը, միրուքը փուեց
փոշիների մէջ, ինչովէս սպաննւած կարապի թեր:

Եւ քամին հին անէծքի երգը մոնչալով հաւաքում
էր շրջակայքի փոշին, կոյտ-կոյտ բերում թափում էր
ծերունու գլխին, թիկունքին, ոսներին:

Գերեզմանափորի եռանդով նա թաղում էր ծերու-
նուն և քրքջում ու լալիս, և մոնչում ու վշվառմ. փո-
շին թանձրացաւ, այլ ևս չէր երեւում ո՛չ ծերունու
գլուխը, ո՛չ թիկունքը, ո՛չ միրուքն ու ոսները:

Ու հողի թանձր շերափ տակ՝ մայր երկրի կրծքին
փարած՝ նա շնչում էր, նա աղերսում էր.

«Յետ առ ինձ, մայր երկիր . . . ես ասլեցի»

Մթնեց:

Հեռու, մի չոր, ամալի լեռնալանջին, ուր միայն
հիւանդ թռչուններն են գնում մեռնելու և ուշ գիշեր-
ներին բուելն են հեկեկում, պառկած էր նրա որդին,
հողի տակ . . .

ՃՂԹԱՆԵՐ

I.

Հինգ հոգի էինք . . .

Եւ մեղ հերթով նկարում էր ներքինու գէմքով,
յանցապարախ գանկով մի աղասինուած, կարծահասակ
մարդուկ:

Ամրող այդ վորքիկ մարդը օձի նման, գալարուն
և կպչուն մասների մէջ էր:

Բանտը սիրում է իր «հիւրերի» միշտակը խնամքով
ու պինդ պահել . . . և մող նկարում էին մի քանի դիր-
քով-կիսադէմ, ամրող, կանգնած, նստած, երբէք ժըպ-
տաղէմ, միշտ լուրջ:

Բանտը ժպիս չի սիրում. . . հինաւուրց ու հստած
պառաւել . . .

Նեղիկի գարշահոտ բակ էր, որ կենդանական բութ
ու աւերիչ տեսք ունէր, չար ու դաժանօրէն հեկնող.
մնանից ոչ ոք չէր կասկածում, որ նա կենդանի է և
նարում է հազար աչքով:

Բարձր ու մղլած պատերի վրայ ցցած սուր-սուր
ասպակիները փայլվում էին աշնանային վերջալոյոի չո-
գերի տակ — բանտը ժանիքները բացած՝ ժպտում էր
երկնքին, որի միայն մի փոքրիկ կաորն էր իջնում մեր
զիսին խուփի պէս . . . և մնաք աստում էինք այդ երկին-
քը . . .

Այս չար բակում երկու արհեստանոցներ էին գոր-
ծում դէմ ու դէմ չարտակների տակ — մէկում շլթա-

— 28 —

Ներ էին շինում, միւսում՝ դագաղներ... թրընկ, թրընկ, այս տեղ էր խփում բանտի զարկերակը:

Շղթայ ու դագաղ... տառապանք ու մահ:

Ներս բերին դարձեալ երկու կալանաւորներ — երկու երիտասարդ:

Մէկը բարձրահասակ էր, բարակ ու ցամաքած մարմնով, ինչպէս չորացած ծառ: Նրա երկարուկ, ասպետական դէմքի հողագոյն մորթը ծեփւած էր ոսկորներին, ինչպէս նոր ուղղած պատ. ողորկ ու այրւած ճակատը փայլում էր արեւի շողերի տակ՝ ասես ձիթած լինէր. ու, կոր ու խոր աչքերը թարթում էին բըռնըւած գաղանի անհանգստութեամբ: Տնդոտ չնչառութիւնը բարձր ու ցածր է անում նրա ներս լնկած կուրծքը և սուր ծնօար անդադար դողդողում էր:

Ընկերը միջահասակ էր, կարճ իրանով անհամաչափ սաների վրայ:

Արեւից այրւած նրա չէկ դէմքը մորթի եփւած աղիւսի գոյն էր ստացել և տեղ տեղ՝ այտերի վրայ մուգ-սպիտակ չերտեր տւել ձկան թեփերի պէս: Խոշոր աչքերը նեղւում էին արեւի շողերից, նա կծկում էր բիբերը, դողդողացնում կոպերը — կարձատես էր:

Նայում էր կիսափուփի շւարած հացեացքով: Երկառվ էլ նոր էին բանել և գեռ ուշքի չին եկել և երկուսի դէմքերն էլ երկար տանջանքի կնիք էին կրում իրենց վրայ:

Ես նայում էի այդ դէմքերին...

Անձանօթ չին, բայց ո՞ւր եմ տեսել, այս հարյու անդադար դառնում էր գլխումս, իշխում էր բոլոր իմ մտքերի, բոլոր պատկերների վրայ, պատասխան էր պահանջում, ինչպէս ուշ գիշերին ապաստան խնդրող ճամբորդը որ բախում է դուռդ՝ մինչեւ բացւի:

... «Ո՞ւր եմ տեսել...»

Բանտապետի օգնականը՝ քարաթոթոչի բերանով, ցցւած փորով, միշտ հիւանդ և միշտ չար աչքերով մի դեղին մարդ՝ ուրիշ չորս պահակների հետ շրջապատեցին նրանց շղթաների չարախի տակ: Երիտասարդ վարպետը՝ նոյնպէս կալանաւոր, որ իր բաղդակիցներին շղթայելու ախտոր պարտքն էր յանձն առել, չտկում ու յարդարում էր մի շղթայ:

Խմբի յեսեւում գունչը թաթերին դրած, պառկած էր բանտի չունը, սեւ, փոքրիկ ու խորամանկ, և նայում էր տեսարանին չարաճճի աչքերով, ասես ժպտում էր ու սպասում...

— Դէհ, բարեկամ, առաջ անցի՛ր, ասաց օգնականը:

Շղթայում էին բարձրահասակ կալանաւորին:

Նա լսութեամբ նստեց ցոյց տւած տեղը գետնի վրայ, երկար ու բարակ ոտքերը մերկ սրունքներով մեխնեց դէպի փոքրիկ սալը, յետ քշեց իրանը, և չընկնելու համար՝ երկու կողմից երկու ձեռները գետին տըւեց: Երկար ու բարակ պարանոցը առաջ ձգւեց, որպէս խօսելու պատրաստող աքաղաղ, երակները լցւեցին արիւնով և անթարթ ու վախկոտ հոյեացքը քարացաւ: Սնհանդարառութեամբ նայում էր իր ոտներին, մերկ սրունքներին, պատառ, պատառ, ճագճքուած կրունկներին, վշրւած եղունգներին, որոնց վրայ չորացել էր ցեխսախառն, նողկալի տեսքով արիւն:

Պարզ էր, որ նա չատ էր քաղել ոտարոպիկ, քարքարոտ, փշոտ ճանապարհներով:

Վարպետը շղթան յարմարեցրեց նրա ոտքերին, մի ահազին ու ժանգոտ շղթայ, որի երկու օղակները, որպէս բորենու ծնօաներ, գրկեցին նրա լերկ սրունքները և հաճոյքով լիզեցին մորթին:

Եւ ապա մուրճի հարւածներ...

Շունը ասես դրան էր սպասում. առաջի հարւածի

հետ՝ ցատկեց ու սկսեց հաջել ուրախաձայն, ընդհատ ընդհատ ու անկարգ. նա զւարձանում էր, պառյաներ էր գործում ու հաջում . . .

Բանտի շամ ուրախութիւնը . . . անմիտ ու անսիրտ . . .

Վարպետը անյօյլ, ինչպէս փորձւած պայտնար, մի ձեռքով յարմարեցնում էր շղթան փոքրիկ սալի վրայ և միւսով հարւածում թափով, անողորմ. շղթան ցատկառում էր ծեծւող գազանի պէս, շառաչում, կաղկանձում, արորում զո՞ի մորթին, և կաղանաւորը առանձներն էր իրար սղմում, յօնքերը կիտում, շրթունքները կծոտում՝ չճշլու համար: Նրա բարակ պարանոցն աւելի երկարեց, աւելի ձգւեց առաջ և աչքերը լցւեցին արիւնով:

Նա լրութեամբ արիւն էր լալիս . . .

Մուրճի լուրաքանչիւր հարուածը կիզիչ ալիքներով տարածում էր նրա բոլոր երակներում, ծեծում, փշշրում էր նրա հոգին:

Եւ շունը հաջում էր ցնծութեամբ . . .

Օգնականը աջ ոտքը առաջ ձգած՝ կանգնած էր խստութեամբ, աջ ձեռքով խաղում էր փոքրիկ, բոցագյն միքուքի հետ և ձախով սրի դաստակի հետ, ու այնպիսի ուշաղրութեամբ էր նայում շղթայելու գործողութեանը, ասսո սեփական ձին էին պայտում:

— Նայի՛ր, որ չդուրս գայ, դարձաւ նա վարպետին, այս անիրահները կատար ցեղից են, ձկո՞ւն ու կորներ ունին, գիշերները հանում են, սատանան տանիքի . . .

Պահակները ծիծաղեցին սառաղքեալի սարկական ծիծաղով, և վարպետը հանդարանցրեց.

— Ո՞չ, չի կարող հանել, Զերդ . . .

Եւ համոզելու համար, որ չի կարող հանել, հար-

ւածեց աւելի թափով, աւելի կատաղի. շղթան ցատկեց ու ճաց, կաղանաւորի սղմուած ասամները ճռուացին, շրթունքները ծռմոււեցին ցաւագինորին, վիզը երկարեց ասես բնից պրկւելու համար և նա թուքը կուլ տւեց, մի բան մոմուաց — անէծք, կամ հայնոյանք, որ միայն ինքը լսեց:

Աջ սրունքից արիւն ցայտեց ու ծորում էր թուխ մորթի վրայից, որպէս կարմիր, երկար որդ . . .

«Ո՞ւր ևմ տեսել այս տանջւած դէմքը . . .»

Միւս կաղանաւորը կանգնած ընկերոջ զիսին, անհուն վշտով ու սարսափով նայում էր տեսարանին, նայում էր իր շուրջը, կարծես ելք էր վնարում այս զարհուրելի վիճակից:

Եւ ելք չկար, չկար . . .

Նեղ, գարշահոս, բարձր ու մղած պատեր, որոնք իրմաց հրէշաւոր մեղքերը ցցել էին երկնքի առաջ, որպէս արեկ տակ տաքացող օձեր. դէմ ու դէմ գործում էր միւս վարպետը, անագին, բրդբրդոտ գլխով ինչպէս մի գամփու, թանձր աղասոտ միզուքու մի ծերունի, որ գերեզմանափորի անտարբերութեամբ աշխատում էր զլուխը քաշ և բնաւ վեր չը նայում:

Նա դագաղներ էր շինում . . .

Երկուսը պատրաստ էին, երրորդի վրայ ընկնում էին նրա հարւածները, թրչակ, թրչակ, թրչակ . . .

Եւ շունը հաջում էր . . .

Կանգնած կաղանաւորի հայեացքը սահեց այս բոլորի վրայով և ընկաւ աւելի հեռուն, աջ պատի տակ, թարմ հողով կիտով չափ լցւած երկու փոսերին, որոնք սև վերքերի պէս միաւմ էին երկրի կրծքին: Նա անշուշտ չգիտէր, թէ ի՞նչ խոռոչներ են դրանք, բայց ամէն տեղ վտանգ ու չարիք վնարող կաղանաւորի անխար ընազդով՝ նա նայում էր այդ չարագուշակ խոռոչներին

մութ սոսկումով, ասես տեսնում էր երկու հրէների սև
երախները . . .

«Ո՞ւր եմ տեսել այդ ցուրտ դէմքը . . .»

Կալանաւորը նորից նայեց կայտառ, ցատկառղ շա-
նը, խստադէմ օդնականին, իր ընկերոջը, որ շարունա-
կում էր թրապտալ մուրճի հարւածների տակ, յետոյ կըր-
կին այն գամփուի նման ծերունուն որ շնում էր դա-
գաղները անյոյզ ու անկարեկիր, որպէս փշող ոչնչա-
ցնող, կոյր բաղդը. ապա վերստին հայեացքը քարացաւ
այն երկու սև խոռոչների վրայ, որոնք նրան քաշում
էին ինչպէս օձի աչքեր . . .

Նա շշմած էր անորոշ, խաւար երկիւղից :

— Դէ՛հ, հերթը քսնն է, նստիր :

Օգնականի ձայնն էր :

Նա ցսեց. նայում էր կախաղանի սիւների սև
խոռոչներին :

Չորս սկահակների չորս ձեռները երկաթէ մասնե-
րով նրան քաշեցին. նա ցնցւեց, նայեց շուրջը. ընկերը
շղթայւած՝ կանգնած էր իր կողըին :

Հասկացաւ . . . լուռվթեամբ ընկաւ նրա տեղը և մեկ-
նեց սրունքները :

Մուրգը հարուածեց, ժանառոտ օղակները ճչացին,
արիւնը ցայտեց բայտած մսից, շունը հաչեց . . . նրան
շղթայում էին :

Եւ գամփուի պէս մարդը՝ համր ու անտարբեր, շի-
նում էր դագաղները՝ թրըխկ, թրըխկ, թրըխկ . . . և
խոռոչները թարթում էին ստւերապատ անկիւնից մա-
հու խորհրդաւորութեամբ :

«Անկասկած տեսել եմ այդ դէմքերը, այդ լացող
տանջանքը, այդ խղճուկ, նեղիկ աչքերը, բայց ո՞ւր,
ո՞ւր . . .»

II.

Նաւթահանքերից էինք գալիս իմ բարեկամ բժշկի
հետ :

Իմ բարի, իմ ազնիւ բժիշկը . . .

Անագին տղամարդ էր, բարձրահասակ, մարմնեղ,
լայնաթիկունք, խոչոր բազուկներով ու ձեռներով:
Թանձր, աղեխառն միրուքը, թուխ լիքը դէմքը, լայն ու
բաց ձակատը, հարուատ մաղերով պատած գլուխը կարծ
պարանոցի վրաց, մանաւանդ նրա հեղ աչքերը միապին
կաղմում էին մի ամբողջութիւն, որ իր բրաութեան մէջ
հրապուրիչ էր և առաջին խակ հայեացքից վստահութիւն
ու հաւատ էր ներչնչում նոյն խակ անծանօթին :

Եւ այդ հերկուլեսը իր լայն կրծքի տակ մանկական
սիրում էր կրում, քնքոյչ և դիւրազգաց: Ցասում չունէր
բնաւ, այլ մի անհուն վիշտ կեանքի տղեղութիւնների,
գարշանքի ու չարիքի հանդէպ: Եւ իր այդ վիշտը ար-
տայայտում էր ցնցելով իր առիւծի գլուխն և վնչացներով
լայն քթածակներից: Մուրացիկին, անձարին, խեղձին
մերժել չփխուր և միշտ կարմրում էր երեխայի պէս,
երբ նկատում էր իրեն մենքուած ձեռքը: Նա կարծես
ամաչում էր ամէնքից, ով խեղճ է ու տառապում է, ով
անգործ է, կարօտ է, ով լալիս է:

Շատ էին ասել, որ դա օգնութեան վատ ձեւ է.
պատախանի փսխարէն նա միշտ ցնցել էր գլուխը և
վնչացրէլ:

Եյն օրը շրջել էինք գործարանները, բաց աչքով
տեսել պղտոր ու տաք քրտինքը, հարուածող բազուկ-
ների գալարուն ու ծումուող չիկերը, բարկ, լափող բո-
ցերի առաջ տնքացող մերկ մարմինները, որոնցից բարձ-
րանում է տառապանքի գոլը պարան-պարան ինչպէս

Յ

մառախուղ, տեսել էինք տքնող, բայց միշտ քաղցած
ու ցասկոտ աշխատանքը, տեսել էինք...

Ես լուռ էի ու մտախոհ համարնա բոլոր պառյտի ժա-
մանակ, մինչդեռ բժիշկը ամէն մի տաժանօրէն ցաւոտ
պատկերի առաջ ցնցում էր զլուխը, վնչայնում և ան-
դադար կրկնում.

— Զի՞ կարելի, այսպէս չի՞ կարելի...

Եւ այժմ, երբ յետ էինք գալիս, նա կարծես իր
բացականչութիւնը բացարկելու, հիմնաւորելու համար,
շարունակ առաջն էր փակում և ահադին թաթը ուսիս
դրած՝ խօսում էր ջերմութիւնը.

— Զի՞ կարելի, այսպէս չի՞ կարելի, ասում էր նա,
ոչինչ չունիմ է է.. մարդիկ անհաւասար են ծնուռմ,
մէկը ուժեղ, առողջ, միւսը՝ թող, հիւանդոտ, մէկը՝
եռանդով, միւսը՝ ծող, մէկը ճարպիկ, միւսը՝ խեղձ.
ի հարկէ, բան չեմ ասում է է, այդ այդպէս է. ամէն
մէկը իր հետ հազար հազար տարիների, հազար հազար
սերունդների ժառանգութիւն է բերում, իրանից անկախ՝
նոյնպէս իրանից անյայտ, բայց էլի առում եմ, այսպէս
չի կարելի... տեսար չէ, այսպէս չի՞ կարելի...

Եւ նա վերջացրեց յաղթական շնչով, ցնցեց զլու-
խը, ասես այս վերջին խօսքերով լուծեց ընկերական
բարդ, ցաւոտ առեղծւածը...

Ծնորնիւ բժիշկի, գնացքին ուշացանք, պէտք էր
սպասել յաջորդ գնացքին:

Քայլում էինք կայսրանի առջևի հրաւորակում:

Բժիշկը շարունակեց:

— Ասում են՝ աշխատանքն օրնուած է... բայց
սպասիր, ո՞ր աշխատանքը, այս, որ մենք տեսանք...
լաւ օրնութիւն է.— բժիշկը բարձրացայն, դառնազին
ծիծաղեց ու շարունակեց խօրունկ վշտով.— Զէ՛, այսպիսի

աշխատանքն ու այս յարատե քաղցը վաստ, շատ վատ
ամոր է երկիրն ակօսելու արդարութեան և ճշմարտու-
թեան սերմնըի համար... Զեմ հասկանում էէ՛, չեմ
հասկանում, կոլէկախիլլոմ, մատերխալլոմ. յաւելեալ
աշխատանք, մեղքս ի՞նչ թագիցնէմ, չեմ հասկանում,
բայց ասում եմ, այսպէս չի՞ կարելի...

Զէր հասկանում իմ բարի, իմ արդարաուիր բժիշկը.
հասարակական ցաւոտ առեղծւածների գիտական բմբռու-
նումները խուսափում էին նրանից, բայց իր յասոկի իր
վճիտ հոգու բոլոր թերերով զգում էր, որ «այսպէս չի՞
կարելի...»

— Սնանայցին արել կամուց կամաց ի՞նում էր դէպի
հորիզոնը. շողերի հսկայական ու ոսկենուռ շպարը, որ
բռնել, էր ողջ երկինքը, սպասառ սպասառ ցըխ էր զալիս
գործարանների թանձր ծխից ու չնչող մեղքնաների հե-
րից երինքի տակ, գործարանների վրայ շողերի, ծխի, գո-
լորշու ամգերի մի անհարին ժիսոր էր:

Կանդ առամք:

Առաջներս բայց մի աղաստ ու ցաւաշատ լիճ,
լայնածաւալ ու գարշոհոտ, ուր լողիծուն գորշ ցիխը,
հանքերի մեացորդները, ամենատեսակ աղբը, ապական-
ւած դեղնակարմիր ջրերը խառնուած՝ կազմել էին մի
նողիալի զանգուած բարբանած ափերի մէջ:

— Հիւանդ լիճ է, ասաց բժիշկը մատիսն, հոսում
է և չի մեռնում, ինչպէս աշխարհի անարդարութիւնը:

Արդարե լիճ չէր, այլ թանձրացած անէծք ու տան-
ջանք, ծվծիտն ու կննդանի, որ հոսում էր ցաւագինօ-
րէն, աշխատելով աղաստ մշուշի քօղով պատել իր այ-
լանդակ վէրքերը:

Աև հոգափ պէս ծանր նա ընկած էր այդ խորու-
թեան մէջ անյոյս ու անմիտ սփուռել էր ինչպէս մի ճըխ-

լած, չախջախուած ահազին հրէշ, որ մահամերձ հեռւմ
է երկնքի տակ և չի մեռնում:

Այդ հիւանդ լինք...

Երեկոյեան հովը զգւանքով խոյս էր տալիս նրանից,
չանդուրժելով խառնել նրա ժահրու կուրծքը: Սրեի
շողերը ինչպէս խելագար վաղքով յանկարծ ճահճի մէջ
թաղւած կայտառ մանուկներ, թրալրում էին նրա թու-
նու մչուշի մէջ. բեկելուում էին տանջանքով, աղտու-
ւում, լալիս, աշխատելով դուրս պրճնել նրա ախտաւոր
հէքից. և արևը ինսամոտ մօր պէս քաշում էր նրանց
հապճնեպով ու իր ոսկիփայլ վարսերը ցնցում մահաշունչ
ընի վրայ ցաւով ու ցասումալ:

Հիւանդ լին շուրջը ո՛չ մի բնակութիւն, տփերին ո՛չ
մի կենդանի արարած:

Դժոխան էր չնչել այնակեղ և նրա դիւական արգան-
դից էր ժայթքել այդ անօրինակ լինք:

Մի շշլած ճնձուկ թռաւ նրա վրայից անցնելու
համար, բայց սոսկումի ճիշ արձակաց, յետ դարձաւ ու-
ղացաւ հեռու, հեռու...

Մի ծեր ու հիւանդ շուն, ո՞վ գիտէ, ո՞ր տեղից,
հալածական, քաղցած ու ծարաւ քաշ տալով իր ջար-
գըւած մարմինը, երերալով հասաւ, չորս թաթերով թաղ-
ւեց ափերի ցեխի մէջ մինչեւ կուրծքը, ագահութեամբ
լակեց գարշահու, թունաւոր հեղուկը, ապա յոդնած
զլուխը վար թողեց թանձը զանգուածի մէջ, այլ ևս
երբեք չբարձրացնելու համար:

Նա մեռնում էր գողողողալով... և նրա շուրջը լին
դորշ մակերեսոյթը ցնցում էր զայրոյթով:

Մահարեր լինք...

— Տեսնո՞ւմ ես, ասաց բժիշկը թեւս քաշելով:

— Շո՞ւնը:

— Ո՞չ, աւելի հեռուն, և մաս ձեռքը մեկնեց դէպի
լինի խորքերը, ուր նկատում էին երկու շարժուն անձեւ
սուերներ:

— Միթէ մարդիկ են:

— Այո՛, այո՛, կը տեսնե՞ս, նրանք դէպի մեղ են
դալիս:

Եւ արդարեւ անորոշ սուերներից մէկը տեղահան
եղաւ, որպէս մի սե կոծղ ու գալիս էր դէպի մեղ: Կա-
մաց կամաց լին գորշ մակերեսոյթի վրայ տարսամօրէն
ծրագրուում էր նրա զլուխը, յետոյ դէմքը, թերը,
կուրծքը, մարմնի մնացած մասը թաղւած էր ցեխերի մէջ:

Նա լողում էր դէպի մեղ առաջից մղելով մի սե
ու անձեւ բան:

Մարդ էր...

Ցեխի ու աղբի մէջ թաթախւած՝ ինչպէս այն մեռ-
նող շունը, և մարդ էր...

Ծարժուում էր ցաւոս դանդաղութեամբ, կրքով
սպասելով թանձը զանգուածը և առաջից միշտ մղելով
սե հեղուկով լի մի արկղ:

Մինչեւ կուրծքը լին մէջ. նա նախ երկու ձեռքով
մղում էր արկղը, ապա վիզը երկարացնում ինչպէս ձը-
կընկուլ, կամացուկ թեքում էր դէպի աջ, յետոյ դէպի
ձախ, և այսպէս շարունակ թռում էր, թէ թանձը հե-
ղուկի տակ նրա սաները կապուած են ծանր շղթաներով,
որ հազիւ է կարողանում շարժել:

Կարիքի շղթան...

× Արևի թեք շողերը խատղում էին նրա աչքերը.
Քրտինքը ծորում էր թռուխ ճակապից կեղակի միջից ծուռ
ու մուռ ակօներ բանալով, քունքերի վրայից իջում
էր դէպի նիհար, չորացած այտերը: Ծայրայեղ յոզնա-
ծութիւնից չնշանապառ, նա հեռում էր ծանր անքոցով, լայն

կրծքով չնշում էր թունոտ մթնողորառում, երերուում էր, կռանում, բարձրանում, ու լողում միշտ քչելով իր բռոց դէպի ափը, չլթայւած կալմասաւորի անձոր քայլւածքով: Ափը հեռու էր, հեռու էր...

Հասաւ, գատարկեց արկղը լճի եղբին ցեխից շնած վարքիկ շրջափակի մէջ, կանդ առաւ, ոփորձեց թևով սրբել քրանած դէմքը, բայց միայն աղասիեց գորչ հեղումի և ձախ քունքի վրայ կախ ընկած մնաց ցեխի մի կառոր: Գոհ էր, որ հասաւ, լայն շունչ առաւ: Հանդստանում էր կանգնած:

Նայում էր մայր մանող արեխն:

Եւ արեք հեզնօրէն թափում էր մինչև կուրծքը ցեխի մէջ թաղւած, աղտոտած, անարգւած այս մարդու վրայ իր սրացնաւ ցողքերը:

— Ողջ արևմուտքը ծփծփում էր լոյսերի ծովի մէջ և հորիդնը ասես բանկւած էր հոկայական հրդեհով, վարը՝ կարմիր, վեր՝ դէպի երկնակամարը բաց վարդագոյն, աւելի բարձր՝ բիւրաւոր նուրբ, երանազներով շողերը դողդողում էին և լեռների վրայ մաղում լոյսերի անձրեւ:

— Եւ նայում էր մարդը բիրանարաց, հեւալով ու հըմացւած, այս գեղանկար, դիւթական տեսարանին: Ամբողջապէս թաղւած ցեխի ու աղքի մէջ, դէմքը ողողուած գորչ, աղտոտ հեղուկով, կարիքի ծանր շղթան սաներին, անարգւած ու սատրացած մինչև բորբանած, գարշանոտ տիղմը որպէս արորւած ճիճու սողալով ցաւի մըուրի մէջ, նա՞ այդ մարդը, անու ամնայնիւ լոյսի էր ծարու, նրա սլդաւոր հաջեացքը հանդստանում էր բարձրի կախարդական պատկերով և նա նայում էր հմայւած երկնքով, արեով, ոսկեփաղ շողերով... ու քանի նայում էր, հանգած աչքերն լոյսին լոյսի էին, բոց գուածում էր...

դէմքի վրայ խաղում էր դիւթական երազների ժպիաը: Աչ ոք, ոչ ոք չի ասի, թէ լինչ էր երազումնա... հնկերը ձայն առեց:

Նա խորունկ հաւաքնեց, յետ դարձաւ և նոյն ցաւոս դանդաղութեամբ հիւանդ, հոտած լճի միջից սողալով իր արկղի հետ, առաջ գնաց կրծքով պատռելով թանձր հեղուկը:

Հնկերն էր գալիս:

Նոյնպէս ամնջուած, ցեխոս, քրանաթոր, նոյնպէս մի արկղ ու հեղուկով լի առաջից քշելով և միշտ երեսուն, ինչպէս սողերը չլթայւած: Երեկ կարձաւհասակ էր, որովհետեւ զլուխն ու ձեռները հարիւ էին երեսում լճի մակերեսովի վրայ:

Հասաւ, գատարկեց իր արկղը, արեմուտքի տեսարանին չնայեց անգամ, շտագում էր: Յետ դարձաւ, լողում էր շատալ շատալ, աշխատելով համիլ լնկերոց, նրանք հաւասարեցին: Զըերի վրայ այժմ երեսում էին երկու երեսուն զլուխներ, ծոմուող պարանոցներ: Եւ նրանց յետեց լճի մակերեսովի վրայ բացւում էին երկու ակոներ, երկար ու զարարուն, որ երկար ժամանակ չեին լցւում, հեղուկը թանձր էր:

Լուռ նայում էի այդ զլուխներին, այդ հոտած ակօներին:

Արեք մայր մտաւ, ստերներն իջան լճի վրայ, մշուշը թանձրացաւ և այժմ լողացող մարդկանց թիւկունքն կրած երկու ակօները օձի կերպարանք առան, որոնք զլուխները ցցած՝ գնում էին չգիտեսուր...

Շունն էլ չը թրպրառում. մնուաւ և նրա շարջը գորչ հեղուկը էլ չը ցնցւում զալոյցին:

Բժիշկը թևս քաշեց:

Գնանք, ասաց նա, այս էլ օրհնւած աշխատանքի
մի պատկեր է, ջրերի երեսից նաևթ են հաւաքում քաղցից
չմռնելու համար, անդորձներ են. գիտե՞ս, բժիշկը
յօնքերը կիսեց և ձայնը դարձաւ խռպատ, գիտե՞ս, աշ-
խարհի հիմքի քարը ծուռ է դրւած... գնա՞նք:

Կայարանի առաջ սուլից գնացքը:

Բանուրիների ահազին բաղմութիւն աշխատանքից
յետոյ խումբ խումբ դիմում էր դէպի կայարան:

Տուն էին վերադառնում, առան էին վերադառնում
ջարդւած աւերակ մարմինների հանգիստ տալու:

Բոլորը մրսու էին...

III.

Երկրորդ կալանաւորը նոյնպէս շղթայուած էր:

Երկու ընկերները սոտքի էին, իրար սղմուած ու ան-
չարժ:

— Դէ՛ն, յառաջ, հրամայից օդնականը.

Նրանք անշարժ էին, վախենում էին քայլել ծանր
շղթաներով, ինչոքս նոր սոտքի երած մահուեիներ և յու-
սահատ առաջներն էին նայում:

— Ի՞նչ էք քարացել, յառաջ, որոտաց օդնականը,
ոճիրից չք դողում, իսկ շղթաների մէջ կծկել էք.

Միշտ իրար սղմուած՝ անհամարձակ, աչքերը գե-
տին յառած, նրանք միասին ձգեցին աջ սոտքերը:

— ... Զրբնգ, զրբնգ, զրբնգ...

Երերալով, իրար բանած, թեքւելով՝ աջ ու ձախ,
դանդաղ, ցաւազին ձիգերով, նրանք գնում էին...

Ճիշտ այնպէս՝ ինչոքս հիւանդ, հոտած լճում:

Յիշեցի, դէմքերը, քայլւածքը. տանջող հարցն էլ
չէր բաղխում գանկս:

Յեխից մինչև ոճիր, մի քայլ է միայն:

Յանցագործի գանկով մարդը մեղ նկատեց վեր-
ջապէս.

— Զինւորական դաստիարակով պիտի դատեն, ասաց
նա մեզ խորհրդաւոր շուկավ, ինչոքս դաւաղիք ոճրա-
գործ.. կը կախեն, աւելաղրեց նա ցոյց տալով շղթայ-
ւած կալանաւորներին և ժպտաց օձի պէս...

Մենք լուռ էինք.

— Այս, այս խոռոչները աեսնում էք, նա ցոյց
տեսց այն երկու կիսով չափ լցւած փոսերը.. այսուղ են
անկում կախաղանի սիւները. անցած գիշեր երեք հոգու
կախեցին... և նա նախ ժպտաց, ապա ցածր ձայնով
ծիծաղեց, հի, հի, հի... արել մայր մոտաւ. ստւերների
հետ անիծուած բանար նօթերը կիսեց:

Շունը չէր հաչում, շղթաների ձայնը խեղդւեց հե-
ռու՝ բանտի մոայլ, խոնաւ միջանցքներում, ու յետոյ
խոպառ մարեց:

Միայն դագաղագործը շարունակում էր հարւածել,
թըրիւկ, թըրիւկ, թըրիւկ...

Եւ աջ պատի տակ կախաղանի սիւների երկու խո-
ռոչներն էին թարթում, որպէս մահնան դաժան, սար-
սեցուցիչ աչքեր...

ՀՍԿՈՒՄԻ ԳԻԹԵՐԸ

Երեկոյեան սառւգումը վերջացաւ :

Դուները փակւեցին այն տենդու ու անմիտ կատաղութեամբ, որ յասուկ է բանտապահների լողոր շարժումներին :

Արդէն երկու անգամ աւագ-բանտապահը անցաւ կիսախաւար միջանցքով, իր ձեռքով մէկիկ-մէկիկ քաշքրշեց ահագին կողպէքները՝ խմանալու համար, թէ արդեօք որ և է մէկը սխալմամբ բաց չի մնացել։ Նրա վարժ ու կոչտ ձեռքի տակ կողպէքները մռնչացին կատաղած շան պէս, երծուեցին երկաթէ օղակը, որոտագին զարկւեցին թանձր գռներին, որպէս զի ներսի կալանաւորները լաւ խմանան, թէ անօգուտ է բանալու ու փախուստի որ և է փորձ։

Դուրսը մութ էր :

Նեղիկ լուսամուտի երկաթների արանքից խաւարը հեռում էր մեղմու, մեր խղճուկ ճրագը միտում էր ու սպազում. Նրա հիւանդ լոյսը տանջւում էր ու անքում ինչպէս մնը գալարւող տառապող հոգին։ Եւ պատերը ինչպէս ամէն գիշեր, այսօր էլ խորհող վհուկների պէս, զլուխները քաշ՝ կնճուտ ճականների տակից նայում էին մնդ սպասնագին հեղնութեամբ, կամ իրար աշքով անում, որ միասին սղմեն, իրար մօաւենան մնդ խեղդերու համար։

Տօթ էր. օդ չկար, անիրաւ խաւարը տաես վիշապի պէս ծծում քաշում էր լուսամուտից մեր ամբողջ օդը, ծծում էր ու հեռում։

Բանտափի գիշերը բնութեան գործ չէ, նա ով գիտէ ինչ անձանօթ ու նողովւած աշխարհից ծնունդ առած հրէ է, որ խեղդում, արրորում, լափում է . . .

Չոր խշիկիս վրայ ծինւերս գրկած՝ ակնապիշ նայում էի այն մձնաւոր աստղին, որ անուշ յամառութեամբ ամէն գիշեր թարթում էր մնդ, մեր ճրագին ու մեր տանջանգին։ Յիշեցի ընկերովն, որին «ատրան» մի քանի օր առաջ. ամէն օր այս ժամին նա խօսում էր այս կարեկից ասաղի հետ. ժամում էր նրան, համբոցներ էր ուղարկում ով գիտէ ինչ թանկաղին ու հեռաւոր էակի հասցնելու համար, ու երջանիկ էր նրանով, բանտապին գիշերի զարուրանքի մէջ, ասաղը նրա գերագոյն ավովիանքն էր, մի հրապուրիչ պատրանք, որ հեշտացընում ու գողարկի երազներով զարդարում էր նրա քունը։ Ասաղը ծծեկում էր և ընկերս քնում էր միան ազդ ժամանակ։

Երջանիկ լնկեր :

Այդ աստղն ինձ ոչինչ չի ասում. ահա նա կը ծածկը և կը մնայ իրական այս գաման բանար, անլոյս գիշերը, այս անքազող բոցը, այս հեւացող խաւարն ու մեր առնջանքը։ Զէ՞ որ էնանցի մէջ միակ իրականը, միակ յափառենականը դարձեալ տանջանքն է ախւզերական, մնացածը ովչ պատրանք է, ինչպէս այս խղճուկ ասուղը։

* * *

Մեր ծերուկ ընկերակիցը հանդարս գնում զալիս էր անկողինների, արամնքի փոքրիկ տարածութեան վրայ՝ ամէն անզամ չըրսական քաղ յետ ու առաջ։ Նախ ձըգում էր աջ ուրքը, ապա կամացուկ քաշ էր տակիս ձախը՝ ասես վախելով, տարօրինակ, ազանդակ քազուածք։

ինձ ասել էին, թէ այդպէս են քաղում տաժանակիր աշխատանքի դատապարտածները որոնք երկար ժամանակ ոտքերով քաշ են տեղ «տաչկան»:

Ամէն անգամ որ դառնում էր, ես նայում էի նրա թիկունքին, այդ ծուռ ու մուռ թիկունքին, որի աջ ուսը բարձր էր, ձախը՝ ցածր, երկուն էլ իրմաց դիրքի մէջ մի հեղնական բան ունին: Եւ նրա զլուխը միշտ թեքած աջ ուսին, ասես մշտապէս ականջ էր դընում, մշտապէս լուսմ մի խորհրդաւոր շըռկ:

Ի՞նչէր էր կրել այդ թիկունքը... խորդուրորդ, աւերակ ճանապարհ, որով անցել էր երկար տարիների, արկաների կարաւանը:

Ի՞նչ էր մտածում այժմ այդ չարքաշ ծերուկը, չգիտեմ, գուցէ և ոչինչ, այդ մարդն այնպէս տարօրինակ էր— մի մուլթ անդունդ, որ տեղից լսում էր շարունակ հեղնութեան դժոխացին քրքիչ. նա զարմանալի կերպով հեղնել դիտէր, և հեղնում էր շարունակ: Երբ նա կամացուկ շրջում էր իր սեղածե միրուքը, շրթունքների երկու կողմերում կաշին խոր ծալքեր էր կազմում, թաւ յօնքերի տակ մանրիկ, խորը աչքերը պլասում էին, ես գիտէի, որ նա մի դաժան բան պիտի ասի:

Կեանքի գաւութեան ասրտակն էր այդ զարմանալի ծերունին, կարծես ծնունդից յետոյ մայրը նրան թրծել էր անապատի բարկ աւագների մէջ ու խսպառ չորացրել նրա արցունքի աղքիւրը:

Նա լոլ չգիտէր, այլ միտին հեղնել, հեղնել ու ժպտալ...

— Տաչկան ի՞նչ է, ամի, հարցրի ես յանկարծ:

Նա յետ նայեց, կանդ տուաւ, աջ ձեռքով քաշեց միլուքը, ու ժպտայ.

— Տաչկան փայտեաց փոքրիկ սալակ է, որ շղթա-

յով կապում են տաժանակիր աշխատանքի դատապարտւածի ոտքերին... ասում են որ այդպէս աւելի հեշտ է քաղլել ու աշխատել:

Նա հեգնում էր, անիրաւը:

Լուցի, ծերուկը շարունակեց քաղլել յետ ու առաջ, երբեմն մի քանի ըստի կանգ առնելով լուսամուտի առաջ:

Փոքրիկ «Մարտւսիան» մէջքի վրայ սպառկած՝ ըստ սովորութեան լեզուվ շրիկացնում էր, ու սոները խաղացնում օդի մէջ մինչեւ քնի:

Այդ պատանին, ո՞վ էր արդեօք ինչո՞ւ էր բանտառմ, ի՞նչ էր իսկական անոնը, և ինչո՞ւ էր կրում այդ կանացի անունը— «Մարտւսիա». նոյնպէս չգիտէի... փոքրահասակ կալանաւորների կեանքը բանտառմ մութ զարութանքներ ունի, որոնցից կարելի է շշմել...

Երկու օր առաջ էին նրան փոխաղբել մեղ մօտ՝ հիւանդանոց: Դրանից առաջ ես նրան յաճախ էի տեսնում բակում զրօսանքի ժամանիքն: Կոշտ քաթանի կեզտոտ շապիկ ու վարտիկ մերկ մարմնի վրայ, միշտ ոտարորիկ, գլխաբաց. մազերը՝ խուր, դէմքը՝ մրոտ, խոշոր աչքերը մշտավառ ու չուծ մի անցած սարսափից, լայն բերանին մի յարատեւ, անմիտ ժպիտ, որ չէր անցնում նրա լայի, ցաւի, տանջանքի ժամարին անգամ, ու թըւում էր, թէ նա մի օր, մի գերազոյն երջանկութեան ժամին ժպտացիկ է այդպէս, ապա մի յանկարծական սոսկում մթագնել է նրա բանականութիւնը, ժպիտը լնդ միշտ սատել շրթունքին:

Ո՞վ էր այդ պատանու ժպիտը այդպէս անողորմ կերպով հիւակ մութ սարսափի հետ. ո՞վ էր գալարել նրա մատաղ հոգին, դարձեալ չգիտէի, և չէի ուղում հարցնել:

Բանտի սգին էր Մարտուիան. զրոսանքի ժամերին մնամնակ ու լոելեայն թափառում էր պատերի տակ, միշտ զլուխը քաշ, միշտ հայեացքը ուների առաջ՝ մի բան վնասողի պէս:

Երբ մէկն անցնում էր կողքից, նա զլուխը բարձրացնում ու աղերսական ձայնով ինդրում էր մի կոպէկ, ուղիղ մի կոպէկ։ Ստանում էր կոպէկը, կանգնում էր, բարձրածայն հաջում շան պէս, ապա ճարպիկօրէն թաթերի վրայ լնկնում և ուղերը ցցում երկնք:

Ի՞նաձ էր ուսանողը միայն, հպածանքի մանվայով բունած այն երիտասարդը, որ խչահակի վրայ ձգւած առանց վերմակի, անհանգստութեամբ հեռում էր տօթից։ Քոնի մէջ նա երեմն բառնցքը ճօնում էր օդի մէջ, մէկն սպառնում, հայհոյում, կամ ծածկում էր երեսը ձեռնելով, լավի էր հեկիկալով, աղերսում էր, անքում, բառաջում մորթւող ոչխորի պէս, յետոյ յանկարծ նըստում էր աշքերը լայն բաց անում, սոսկումով լի հայեացքը դարձնում իր շուրջը՝ առանց ոչնչ տեսնելու, ու կրկն խորտակում իր տեղումու քնում։ Նա մշտական մղձաւանջի մէջ էր ասպրում, անորոշ ու մոռթ մի երկիւղ պաշարել էր նրա խեղաթիւրւած հոդին, որ էլ աւելի սաստկանում էր զիշկները ու մօնաւանդ քնի մէջ։ Անկարելի էր նրա հետ զրուցել սննդամ՝ տամնասով զորտկան նիւթերի մասին, իւրաքանչիւր բոտի տակ նա վնարում էր մի սպառնալիք, մի նենգութիւն, մի մահարել դաւաղբութիւն, նա զարհութերի էր դաւանում մանաւանդ՝ երբ ինքունքը երեւակայում էր թունաւորւած իր խոկ լնկերակիցների ձեռքով, նա մւնչում էր, ճշում, նետում այս ու այն կողմ. պատերը չանգուում, մաղերը վետում։

Մեր բացարձակ ու մեղմ անուշաղը թաթիւնն էր միւայն կարտանում նրան հանգստացնել։

Այսպէս էին լմ լնկերակիցները։

Ու աղանդակօրէն անմիտ մի բան կար մեր այս չորս հոգու ակամայ լնկերութեան մէջ. մի՛ չար ու քինոտ ոգի ուխակ էր հեղնել կեանքի ամէն տրամաբանութիւն, ատիպերով որ մնաք ապրենք միասին։

Չորս ծւառաւած, անզօր գոյութիւններ, իրար անձանօթ, իրար խորթ, բայց կապւած իրար ճանճոյթի, թախիծի ու ցաւի համար։

Այս հրէշաւոր կեանքի վրայ չէ արդեօք, որ թաթթում են պատերը և սրա համար չէ հեռում, ու աղնքում պլազմն ճրագը։

* *

Աստիլլ ծածկւնց։

Ծերուկը կանդ տաւու լուսամուտի առաջ և սովորականից աւելի երկար նայում էր բակն, ևս նկատեցի որ նրա բարձր ուսը մի քանի անգամ ցնցւեց, ու նա մի բան մւռնաց տառամների արանքից, որ չհասկացայ։

— «Նրանց» այս գիշեր կը կախեն, ասաց նա քիչ յետոյ առանց յատ նայելու։

— Ի՞նչ դիտես։

— Բակն նայի՛ր, պատոսիսանեց նա հեռանալով, լուսամուտից նա զլուխը տարուրեց, միրուքը ջղածքարար քաշքանց, յօնքերը կախւեցին խոր աչքերի վրայ և հայեացքը յատակին յառեց, ինչպէս նա միշտ անում էր երբ յուզում էր ու հեղնում։

Ես վեր ցատկեցի տեղիցս, մօտեցայ լուսամուտին, զգուշութեամբ նայեցի — քաղաքապահ ոստիկանների մնձ բազմութիւն կար բակում, նրանք լուռ կանգնած

էին պատի տակ, խաւարի մէջ և ըստ երևոյթին սպասում էին կարդաղը ութեան:

- Բակում շատ ոստիկաններ կան, սասացի:
- Այդ է, որ ասում եմ, «Նրանց» կը կախեն:
- Գուցէ խուզարկութեան համար է...
- Ծերուկը ծիծաղեց իր վաստ ծիծաղով:
- Ես սոսկացի ու փոքրացայ. այդ ծիծաղը...

Այդ զարմանալի ծերուկն այնքան բան գիտէր բանտերի կեանքից, որ ինձ համար դարձել էր անսպայման ու անողորմ հեղինակութիւն:

Բանտը իր նենգութեամբ, իր դաւաղիր չարիքով, իր խաւար ոճիրներով նրա համար մի բաց գիրք էր, որ կարդում էր ամենայն հեշտութեամբ, ոչ մի զգուշութիւն, ոչ մի գիշեր, որքան և թանձր լինէր խաւարը, ոչ մի վարչական ժայռ, որքան և վարպետորէն սքօղէր կեղծիքը, չէր կարող նրա խորաթափանց աչքից ծածկել որ և է գաղտնիք, սպասնացով վտանգ, կամ նիւթւող դաւաղը ութիւն:

- Ես այդ փորձով գիտէի:

Եւ նրա խոռքերը հնչւեցին, որպէս ճակատագրի անողոք վճիռ, որի դէմ ոչինչ չխ կարող անել: Թեթե դող անցաւ մարմնովս և ինքզինքս զդացի չորս կողմից պաշարուած գաղանի վիճակում, որ կրծտում է ատամներն ու փրփրում:

Նրանք երկու հոգի էին՝ կախաղանի դատապարտւածները, մէկը բարձրահասակ, թխաղէմ, կլոր միլուքով, սև, ածուխի պէս աչքերով կայտառ, ջղուտ մի երիսասարդ, որ իշխողի խառնուածք ունէր և արհամարհու ու մէգ քայլւածք անդամ շղթաների մէջ՝ միւսը՝ միջահասակ, մի փոքր կուցած թիկունքով, շի-

կահեր, նիհսը ու վշտոտ դէմքով, երազուն ու յոզնած հայեցքով, սառնարիւն ու խաղաղ:

Դասապարտւած էին մահան, այդ գիտէինք, բայց գիտէինք և այն, որ այդ վճիռը փոխելու շուրջ դիմումներ են եղել, ժամ առ ժամ սպասում էինք, յաջող վախճանի: Զգիտամ ինչու, բայց ամենքս էլ հաւասացած էինք որ մահան պատիժը կը փոխարինւի: Անհարին էր երկում, որ կախեն «Նրանց», այդ երկու ծաղկափթիթ երիտասարդներին, ամենայն օր մեր աչքի առաջ էին նրանք, ասում, խօսում, ծիծաղում, կատակներ անում, սրան նրան հրհրում. ինչպէս երեակայել, թէ այդ ժամուն աչքերը, այդ լայն թիկունքները, այդ ասող ուժեղ բազուկները, այդ ամբողջ կինդանի շարժուն կերտւածքը յոյսերով, եռանդով այդ լի կեանքերը չկան այլ ևս, յանկարծ անյայտացան հողի տակ այնպէս, ինչպէս, երբէք աշխարհ եկած ցինէին:

Եւ չէինք հաւասառմ... բայց ծերուկն ասում է՝ «Նրանց կը կախեն այս դիշեր...»

Անիրաւ ծերուկ:

Միջանցքից անցան բանտապահները, անհոգ սուկելով՝ ինչպէս միշտ, նրանցից մէկը ցածր, խոպոտ ձայնով մի երգ էր մուսում խաղացնելով ձեռքի բանալիները:

Այս սովորական էր:

Կամերաներից լուող կալանաւորների մեղմ փախտւքը նոյնպէս սովորական էր. շոգ էր, քնել չէր լինում և շատերը դեռ ցած ձայնով խօսում էին: Բակի ոստիկաններից բացի ուրիշ ոչինչ աչքի ընկնող, արտասովոր երեսյթ և արդեօք ծերուկը չէր սիսալւում, չէ որ խուզարկութեան ժամանակ էլ շատ ոստիկաններ են լինում դրսից:

Կասկածս յայնեցի:

— Ես քեզ ասում եմ, որ «նրանց» կը կուխեն այս գիշեր, եղաւ պատասխանը:

Անողոք...

Այդ չարագուշակ բառերը նրա շրթունքներից ընկնում էին որպէս հալած արձիձի կաթիներ, ընկնում էին ու քարանում և ևս տեսնում էի բաց աչքով։ Զգում էի թէ ի՞նչպէս հողուս խորքում անախորժ մի զգացմունք է զարթնում դէպի ծերուկը, զրեթէ ասելութիւն։ Նա չէր թողնում, որ ափոփիչ կառկածիս փարիմ, որպէս յետին փրկութիւն, չէր թողնում յուսալ, և խստասիրա կիրապով փշում էր իմ խախուտ արամարանութիւնը, իմ խղճուկ պատրանքը։

Մօտեցայ գանակին և շունչս բռնած՝ նայում էի միջանցքին։

— Ինչո՞ւ ես ցցւել այդ տեղ։

— Տեսնեմ ի՞նչ է լինելու։

— Ի՞նչ ոլիսի լինի, մի սովորական բան, օօ՛, շատ սովորական, այս, մեզանից քիչ այն կողմը երկու երիտասարդներ կան, որոնք գուցէ այժմ խորը քնած են, առողջ, ուժեղ, կեսնքով լի երիտասարդներ, և երկու երիք ժամից յետոյ նրանք հողի տակ կը լինին, և նրանց գերեզմանի տեղն էլ ոչ ոք կ'իմանայ, որդերից բացի, որոնք սիրով կը լափեն այդ թարմ, հիւթեղ մարմինները... Հա՛, ամենասովորական բան, վերջացրից ծերուկ ընկերա և ըստ սովորութեան գնաց պառկեց ամնկողնի վրայ, ձեռքերը զիսի տակ դրեց, աչքերն առաստաղին յառեց ու կամացուկ սուլել սկսեց։

Ո՛ւհ, այս սարսափելի մարդը, որ կարողանում էր անցող սուլել այսպիսի դաժան ժամին։

Մարտափան շարունակում էր լեզով չփիայնել և խաղալ ոսմերի հետ միանդամայն անուշաղիր դէպի էր

շուրջն անցած դարձածը։ Եւ մի երկու անդամ անմուշէն ժպաց առաստաղին։

Ուսանողը քնի մէջ դարձեալ մի քանի անդամ ճշաց, լաց եղաւ դառաչեց, զլաւիը բարձրացրեց, չորջը նազից ապուշ-ապուշ ու կրկն քնեց։

Կուրծքու աւելի և աւելի սզմում էր, օդը պակասում էր, ու մի բան ասելու, խօսելու կոմ ճշաղու անշաղթնի պահանջը հոգիս էր մաշում։

— Կարծում ես որ միւս կամերանիբում դիտի՞ն, հարցը ես։

— Եթէ քո օրին մարդ են, չն իմանայ, էսկ եթէ իսելքը զինեներին է, կ'իմանան։

Լսեցի. անիրաւ ծերուկի հետ խօսել չ'ը ինում։ Հերթն իմն էր, այժմ ես էի զնում-զալիս և նայելով մէկ դրան անցքից մէկ լուսամաւտից, ականչներս սրած՝ ու հողիս խոռվայրով։

Աչքի աակավ նայեցի Մարտուսի այլն, կ'ուզէի որ նա չուսով քնի, որ նա զոնէ բան չնախանաց, բայց ոչ, նա անքուն էր, բերանով չփփացնում էր և ոսմերը շարժում օդի մէջ։

— Քնի՞ր, քնի՞ր, ասացի, բաւական է խաղ անես։

Պատասխանի փախարէն, պատասխին դարձեալ անմուշէն ժպաց առաստաղին՝ սումն ինձ նայելու։

Ու դարձեալ աչքիս առաջ ցցուեցին երկու երիտասարդների պատկերները. մէկը՝ թուխ, բարձրահասակ, միւսը՝ շիկաներ ու անուշ դէմքով, երկու էլ աչքերը բայց, թիկունքները լայն, ուժեղ, պարանոցները՝ շիակ, զլուխները՝ բարձր, կենդանի մարդիկ և փորձում եմ նրանց երեակայել մնած, աչքերը ճոթուած, դէմքերը կապտած ուստած և լիզուն արինստ արթունքներից քաշ ընկած... ամկարելի է, երկուն էլ կինդանի են, խօսում

Են, ծիծաղում, նայում են ինձ և յատկապէս ինձ և այնպէս պարզ, այնպէս յատակ... գլուխս ցաւում է այդպապարդիւն ու ցաւոս աշխատանքից, կրծքիս տակ ցացւած արցունք է կուտառում ու սղմում կոկորդս, ևս չեմ ուղում լալ, հոգիս է մխում, հոգիս է դողում:

«Միթէ պիտի կախեն, Տէր Աստած, միթէ պիտի կախեն» մրմնջում էի ինքս երեխ բարձրածայն, որովհետեւ ծերուկը ծիծաղեց իր չոր, դիւալիան ծիծաղով... սարսաեցի, երբ նա ծիծաղում էր ընկճռում, կծկում, փոքրանում էի:

— Այ, եթէ այն ծակից բռունցք ցոյց տաս, ասաց նա, ոչ ոք չի համարձակւի նրանց մազին դիպէլ... այս, երազող, երազող... ու եկել է բանտ նստել, Աստած վկայ, ես վարչութեան աելը լինէի ծոծրակիդ տալով բանափց դուրս կ'անէի, և նա դարձեալ ծիծաղեց, ապա մեղմիւ սուրեց:

«Միթէ պիտի կախեն... միթէ պիտի կախեն...»

* *

Դրսում խաւարը թանձրացաւ:

Միջանցքում լոյսը գնալով-գնալով խեղճացաւ ու պատերի վրայ սաւերներ խաղացին. նրանք հեռանում, մօանում էին, իրար խառնուում, կրկն բաժնուում, գալարուում էին ու անես փափսում էին իրար ականջի:

Բանտում համատարած լութիւն տիրեց. բոլոր կամերաները իրարից զատ-զատ, բայց ապրում էին մի հատիկ միաք. ես հաւատացած էի որ բոլոր կալանաւորները մեզ պէս շունչերը պահած նայում են այս սաւերներին, նայում են ու, հեռում լոելեացին:

Սաւերները կամաց-կամաց անյայտացան. շնորհիւրը

լուցին, միջանցքն ընդունեց իր սովորական կերպարանքը. վերատին անհոգ եղանակով անցաւ հերթակալ վերակացուն. նա էլ չէր մռմառում իր երգը, գլուխը քաշ՝ զնում էր գալիս: Ռոպիչներ անցան, թէ ժամ չգիտեմ, միայն հոգիս յոդնած էր այս գարանակալ վիճակից:

Մի մուլթ ու ահաւոր վասնդ հակայական օձի օղակներով սղմուում էր մեր շուրջը, նեղանում էր, խեղդում էր մեղ. ևս զգում շօշափում էի նրան, էութիւնս իւրաքանչիւր մասնիկն ապրում էր նրա սարսակը. ևս պատրաստ էի լալ ունցողը, պատրաստ էի ճշոլ՝ «Էյ, անողորմներ, ինչ էք ուզում անել, խեղդում ենք, խեղդում ենք...»

— Լսում ես, ասաց յանկարծ ծերուկը, զլուխը բարձրացներով բարձից:

— Ի՞նչը:

— Ոտնաձայները, ի՞նչը:

— Ոտնաձայներ... չէ, չեմ լսում... ի՞նչ ոտնաձայն... սպասիր, լսում եմ, լսում եմ... շատ են... գալիս են:

Այու, ոտնաձայներ լուեցին, զգուշ ու թեթև, ինչպէս մանը. պատերի վրայ սուերները աւելի արագ երերացին: Անցաւ մէկը, նրա ոտքի տակ տախտակը ճռուաց ցաւազինօրէն, ամբողջ յատակը խուլ անքոցով արձագանդ տեւեց: Եկան և ուրիշները... քանիշն են, որչափ և աշխատում են զգոյշ քաղել, բայց յատակը զրնդում է կոչտկրուներից, հրաշյանների կոթերից:

Կանգ տուան մեղմանից ոչ հեռու մի դրան առաջ. այդ «նրանց» դուռն է. ոչ ոք չի խօսում. ոչ մի ձայն, կողպէքին դիպան զգուշութեամբ. սակայն երկաթը զարդեց զրանը շատացիւնով և ողջ միջանցքը աղմըկւեց, և միաժամանակ դուռը բայցեց ծանր հենեկոցով:

Եւ մի ճիչ վրուաւ մեր հարեան կամերից .

«Նրանց» կախում են , ընկերներ . . . »

Եյդ սրտապատառ ճիշ՝ թափով , յնու քաշեց մուլթ դաւաղլութիւնը պատող քօղը , բայց արեց խաւարի մէջ նիւթեռդ զարհուրանքը , և որպէս մի մորթուող խիզճ , մի վայրինան հեկեկաց կիսախաւար միջանցքում , կատաղօքն զարկւեց պատերին , դռնակներից ներս ընկաւ բոլոր կամերաները , գողդողաց բոլոր գլուխների վրայ որպէս գժախային յանկերդ և մեռաւ բանոտի թանձր , գարշահոտ մթնոլորտի մէջ :

Եւ բոլոր կամերաները միաբերան անքացին՝ «Նրանց կախում են , նրանց կախում են . . . » կատաղի մանչոց էր , որ լուսում էր չորս կողմից :

Եւ ազաղակողներն ասես մարդիկ չեն , այլ պատերը , դռները , չղթաները , բանտային ամբողջ մուալլ զամնգրածը որ անզօր ցասումով լուսւած գաղանի պէս փնջացնում էր արիւնոտ ռունգներից :

Ժխոր էր , չղթաների չախողը բարձրացաւ բոլոր կամերաներից :

Իրար արորեկով՝ ամէնքը սղմուում էին դռների առաջ , բացալառ աչքերը դէպի միջանցքը , կրակ չնչելով իրար թիկունքին , ծոծրակին , մերթ պահելով չնչելը մի բան բեկու համար և մերթ պոսթկաղով , անքալով որպէս մորթուող անաստնը :

Դռները խուլ ճռնչում էին , պատերը՝ թնդում ու ամբողջ բանաը հառաջում էր , դրնդում :

Միջանցքում վերատին լուսթիւն տիրեց , ասես ամէնքը յանկարծ գեանի տակ սուլւեցին : Լուցին և կամերաները : Խաւար բացի հեռաւոր ու խուլ անկիւնից պարզ ու յասուկ հնչւեց կացինի հարւածի ձայներ՝ «թըրըխկ , թըրըխկ . . . »

— Կախաղանն են ամրացնում , ասայ ծերուկը . յիւմարներ , անփորձ են . . . ա՛յ , սախալինում այնպէս են անում , որ խաւարն էլ չի լսում . . . տեսնես այս զիշեր քանի՞ տեղ են մարդ կախում . . .

Վերատին լուսթիւն . ապա զսուած խօսակցութիւն մօտիկ կամերաներից մէկում . . . այդ «Նրանց» կամերան էր , լաւ զիտէլնը :

Մէկը չը զարթնում խորը քնից , մումուում էր , անկապ բառեր արտասանում կիսաքուն , նրան ուշքի էին բերում , մեղմիւ , քաղցրութեամբ . նա . դարձեալ անքում էր , գարծեալ մումուում , յետոյ մէկը հայնոյեց ատամների արանքից և յանկարծ շղթամների շառաջը հնչւեց միջանցքում-նրանց դուրս բերին կամերայից :

Երկու հոգի են և շրջապատւած սրահակների հրացանների , վերակացուների կուռ շղթայով : Անհատատու անհամաշափ քաղցւածքով՝ նրանք տարւում են անզօր , գունատ ու հիւծած . սուկումից քարացած դէմքերի վրայ չի խաղում ոչ մի չիլ , հայեայքները երազական . չգիտեն , թէ ի՞նչ է կատարւում իրենց հետ : Մերթ ալմուում են իրար , մերթ հեռանում , ոսներնին իրար են խառնուում և նրանց շղթամները հնծեծում են զատ զատ : Ռւզելիցով բազմութիւնը նոյնպէս լուռ է , ոչ ոք չի խօսում , ոչ ոք հարևանին չի նայում , ու ամէնքը ատարւում են , ամէնքին յեանից մզում է մի մութ անկերեսյթ ոյժ , մի արիւնարսու հրէշ , ասես իւրաքանչիւրն զգում է իր թիկունքին նրա սառը շունչը , զգում է իր ձեռքերի մէջ նրա ձիրանները և քայլում է առանց յետ նայելու , սղմուում է զիմացնի վրայ , արորում է նրա սաքերը , ու շատապում են , շատապում են . . .

Յատակն է ողբում նրանց սաքերի տակ և ստեկ-

Ներն են պարում պատերի վրայ մահւան այլանդակ պարը :

Անցան . . . ունաձայները հեռացան, բակումն են արդէն :

«Օդնի . . .» ճիշեր, բացւած թերանը յանկարծակի խցւեց, կոկորդը սղմւեց, օգնութեան աղաղակը խեղդւեց տանեակ մասների տակ, որպէս կտրւած լոր: Եր անզօրութեամբ ու անմտութեամբ ահաւոր այդ ճիչը, այդ փշրւած, այդ աւեր աղաղակը աւելի հզօր էր, քան թէ հարար կոկորդի միահամուռ պոռթկումը. օրհասուկան ու ցասկոտ մի օձ էր որ մեր հոգիները խարազանեց և իր սառն կծիկների մէջ մեր անզօրութեան ու մեր ոչնչութեան կոկիծը վոթորից: Յողոր գոները ճռնչացին, բոլոր սրատերը թնդացին կտրանաւորների խելագար հոնդիւնից. ատամներ կային որոնք պատրաստ էին դըռների երկաթների մէջ թաղւելու, և բառնցքներ, որոնք անմտօրէն արիւնուում էին կուռ փականների վրայ: Հարեան կամերաներում մէկը լալիս էր մեղմիւ, մէկը հեկեկում բարձրածայն. միւսը ոռնում էր ասես ահազին ցաւից, մէկը հայհոցում էր և բոլոր այդ ձայնները կրում էին թանձր պատերի մէջ, ցածրեկ, դաժան կտուրների տակ, որպէս շոգեկաթուայի մէջ:

Անզօր, եղեկի ճիգ կասեցնելու մահւան թափօրը . . . որ գնում էր, հա՛ գնում, գէպի բակի հնուաւոր, խու ծայրը, խոնանոցների յետել: Շղթաների ձայնը լոեց. լոեցին և կամերաները, ականչ էին գնում, շուկներ, ձայններ, ճիշեր որապէս խուարի մէջ. անձար ցասումից ու կոկիծից խելագար, իւրաքանչիւրը աշխատում էր հեռուից, այս բանտի խորքից մաս մաս սալիկ այնտեղ բակի ծայրում կտառարուղ սոսկումը և սեփական հոգին ծւատել անզօր կատաղութեան ճիրաններով:

— Միայն թէ սա չզարթնի, ասաց ծերունին ցոյց տալով քնած ուսանողին . . . հա՛, միայն թէ սա չզարթնի:

Մոռացել էի ծերուկի ներկայութիւնը. շուրջու նայեցի ու մնացի սկսեակի կեղրոնամ քարացած, և ծեռքերը կրծքիս խաչած. զլուխումն ժխոր էր:

Լաւեց մուրճի ձայն, որ ընկնում էր չղթաների վրայ:

— Բարի մարդիկ են . . . հանում են չղթաները . . . անյարմար է չղթայւած մեռյնել աղատ մարդուն, Սատւած կը խոժուաւի, չէ՞ որ նա մարդուն աղատ է սակածել . . . և նա ծիծաղեց իր չոր, վատ ծիծաղով.

Վերասին լուռութիւն, ամէնից խորը, ամէնից խեղդող լուռութիւնը նզաւ բանտի վրայ, ասես մեր շուրջն այլ ես ոչ չէր ապրում:

— Կախում են, ասաց ծերուկը . . .

Ես անուշաղիր էի. քիչ առաջ տեսայ նրանց աղօտ լոյսի տակ, տեսայ կերպարանափախւած, անդրչիրիմնան տեսքով, լուռ, ինչպէս մահը, բայց քայլում էին, շնչում, նայում և այժմ կախում են. «Միթէ մեռնում են, միթէ . . .» ձայնա կերպերաց, կոկորդս սղմւեց և յանկարծ դարձեալ մի ճիչ, մի գերմարդկային, պրասպատառ ճիչ, վայրենի, ահագին, ինչպէս ողոցւած, ընկնող կաղնիի յետին ճռնչոյը, որ խու արձագանգնարով սոսկում է փուռմ անտառում. այնպէս նկատ այդ ճիչը, դաշրուն, ալիծածան հողի թեւերով, զարկեց բանտի պատերին, չանգուեց, հեծեծաց, կաղկանճեց ու մնուաւ:

— Կախեցին . . . դարձեալ ծերուկն էր խօսողը.

Ոաներս ծալեցին ապրած սոսկումի ծանրութիւնից և փուլ եկայ խշովիս վրայ ձեռքերով ճնկերս զրկած:

Եւ նոյն վայրկենին Մարուսիան, որին խազառ մոռացել էր, ոտքի թռաւ, կանգնեց սենեակի մէջ տեղում ծեծւած շան ձադի պէս կաղկանձեց, հաջեց ու քրքչաց. ուսանողը զարթնեց, տեղից բարձրացաւ, խելագար հայեցքը չորս կողմը ուրբեց, թռաւ, բռնեց պատանու ուսկը, ցնցում էր, ճշում.

— Ի՞նչ... ի՞նչ... ո՞վ... աա՛, այդ դու՞ ես :

— Կախեցի՞ն, ճշաց Մարուսիան դուրս սրճնելով նրա ձեռքից, այ՛, նրանց... այնաել... ցոյց տւեց դէպի լուսամուաը : Եւ մինչեւ որ ես շարժւելու փորձ կ'անէի, ուսանողը կատուի ճարպիկութեամբ վազեց դէպի լուսամուաը, կախւեց երկաթներից :

— Կախում են... հէյ, հէյ, օգնեցէ՛ք, քերթում են, սպանում... մորթում են ..

Վրայ հասայ, կախւեցի սաներից, յետ քաշելու համար . նոյն վայրկենին խաւարը պատռւեց բակում, մի որոտ լուեց, մի գնաակ սուեց շեշտակի դէպի մեր լուսամուաը. գնտակը շաշելով գնայ թալւեց դիմացի պատին . ես ժամանակին էի յետ քաշել ուսանողին :

— Օրական մի հանաքը բաւական է, ասայ ծեռւկը :

Ուսանողը ընկաւ անկողնի վրայ . հեկեկում էր ու գալարւում :

Մարուսիան աջ ձեռքով բանել էր ձախ ուսը, որտեղից ծորում էր արիւնը և ներկաւմ կեղտու շապիկը :

Գնաակը անցել էր քերելով նրա ուսը. ծերունին մօտեցաւ իր շապիկը պատռեց, նրա վերքն էր կապում սուլելով, պատանին դարձեալ ժամառում էր, ապա կամացուկ պառկեց իր անդում ու սկսեց չփիփացնել լեզով. վէրքը թեթև էր :

«Թըրըխկ, թըրըխկ, թըրըխկ...» լսում էր հեռուից :
— Դադաղների կափարիչներն են պնդայնում...
մռմռաց ծերուկը, յետոյ կը տանին թաղելու... յարգանք մեռեներին... այնպէս չէ... և նա քրքչում էր չոր, խղւած ձայնով :

Մի շոն կաղկանձեց հեռուում, զիլ ու երկար, կաղկանձեց ու լոեց :

«Թըրըխկ, թըրըխկ, թըրըխկ...»
կաւարը դրսում գոնատում էր :
Լուսաբացը մօտ էր :

ԵՒ ԴՐՍՈՒՄ՝ ԱՅՈՒՆՆ ԵՐ ԼԱԼԻՄ...

I.

— Բնկերներ, ևս ձեր հիւրն եմ...

Եւ մեր կտմների շեմքի վրայ յայտնւեց երկար ու բարակ պարանոցով, փոքրիկ զլխով, լայն ու հեղնող բերանով մի երիտասարդ:

Խենթուկ Գրիշան էր.

— Դու՛ էիր սրակաս, բացագանչեցին չորս կողմից ակնյայտ դժկամակութեամբ:

Եւ դժկամակու խոշոր պատճառներ կային:

Գրիշան՝ որ իր ամենօրեայ անվերջ ու խելացնոր արարքների համար «խենթուկ» մականունն էր ստացել, շատ էլ հաճելի հիւր չէր առանց այն էլ խիստ անհրատ պոյր, խիստ գածան մեր կեանքի պայմաններում:

Սրգարեւ, նրա սրամիս կառակիները, կծու սրախոսութիւնները, հազար ու մի ձեռնածու շարժումները ծիծաղի, գլածութեան անսպաս աղբիւր էին բակում գրօսանքի ժամներին, բայց նա անտանելի էր ներսում, մեր խեղդուկ խցերում որպէս բնկերակից:

Նա միշտ հար էր գանում ճարպիկօրէն խոյս տալ մեր կամերը մաքրելու աշխատանքներից, որ հերթով կատարում էինք սամնքս: Զուր չէր բերում, յատակը չէր սրբում, աղբամանը գուրս արբում, աղբամանը միանք բարձրածում: Սիրում էր ուտել, խմել ուրիշի բաժինը, հազնեկ՝ ուրիշի զգեստը: Եւ նրա հազին միշտ կարելի էր տնանել ընկերներից մէկի շապիկը, միւսի բաճկոնը, երրորդի գուլզան կամ

— 61 —

կօշիկը. լակ՝ զլխարկը . . . գրեթէ խւրաքանչիւր օր մի զլխարկ էր կրում և երբէք իրը: Առաւօսները զարթնելիս՝ նա առանց քաշւելու կամ խղճահարւելու հագնում էր աչքին ընկած առաջին յարմար կօշիկը, գուլպան, ըլիւզը ում և լինէր այն՝ թէկուղ ամէնից կարօնին:

Ծով էր, շատակիր և կեղտոս՝ որպէս խոզ:

Ճաշի ժամին, լնդհանուր ամանից որ և է փոքր ի շատէ տանելի ապուր ուտելիս—որ շատ հազիւ էր պատահումնա գիտէր նողկանք յարուցանել մինչև այն աստիճան, որ հեշտ զգուղները հեռանային և ինքը մնակ լափէր ամբողջ կերակուրը:

Մանաւանդ անտանելի էր նա հարբած ժամանակ. և նա հարբում էր յաճախ: Երկար ժամանակ մեղանից ոչ ոք չգիտէր, թէ ո՞ր տեղից է խմիչք ճարում, քանի որ բանտում խստիւ արգելւած է ոգելից ըմպելին: Շատ ուշ միայն պարզեց, որ նա կարողացել է բարեկամանալ գեղատան զլխաւորի հետ և միասին գտղանի խըմում են սպիրալ:

Հարրած օրերը նա մնծ մասամբ անց էր կացնում կարցերում, բայց եթէ կարողանում էր խուսափել այդ պատժից, ապա կամերում կեանքը դարձնամ էր դժոխիք: Սնկարելի էր պարկել, քնել կամ կարգալ, այդ ժամանակ նա սիրում էր մկներ սրաւ և կենդանի խորովել լամպի վրայ:

Այսպէս էր խենթուկ Գրիշան:

Եւ ահա թէ ինչու՞ նրան հալածում էին ամէն տեղից բանտապեսն ստիպւած էր անդադար փոխադրել կամերից՝ կամեր, թէ կուրցեր չէր նետում:

Այս երեկոյ նա մնզ էր վիճակւել, այս անհաճոյ ընկերը:

II.

Մի փոքրիկ սենհակում, որ հազիւ կարող էր սլարտըկել 4—5 հոգի, տասներեք հոգի էինք ոչխարների պէս իրար զլսով փաթթւած, ողն ու լոյսը մուրալով առաստաղի տակ բացւած, փոքրիկ, անողորմ անցքէց։ Արտաշնչում էինք իրար երեսի, հեռում էինք մոնչում, անքում օդի պակասութիւնից և պատրաստ էինք ակռաւներով կրծուակ, փշրել այդ անիծւած լուսամուտի հաստ երկաթները, թէ հասր լինէր։

Մեր ցասումի, մեր տանջանքի մէջ՝ առում էինք այդ լուսամուտը, որ մեզ օդ ու լոյս պիտի տար, և նեղ էր չը տալիս։

Տաններեք հոգի էինք իրար կողքի կծկւած յատակին, մեր պատառաստուն ու աղտոտ վերմախների տակ և միայն մնր մի ընկերոջն էր վիճակւած մի փոքր արձակ անկիւն, այն էլ նրա համար, որ հիւանդ էր։

Տան օրից ի վեր տառապում էր աղիքային տիֆով և վերջին երկու օրը՝ շատ ծանր, զրեթէ անցոյ։ Զէլն տանում հիւանդանոց, ասում էին տեղ չը կայ, հիւանդներ շատ էին բանտում։

Բանտային վարչութեան փոյթը չը, այս անսահնելի Գրիշային շաբանեցին մնր գլխին ինչպէս մի նոր պատուհաս և դուռը վակեցին։

Գիշեր էր, դուրս ցուրտ ու խոնաւ, անձրել մաղւում էր տաղառուկ ու անվերջ՝ բնչպէս մեր տառապանքը և աշունը լալիս էր անմիտ արյունքով,

Լուռ էինք.

Գրիշան իր անդումն էր, զրան առաջ անշարժ և յօնքերի տակից նայում էր մեղ։

— Ինչ էք քաղցած բուերի պէս նօթերդ կիսել, հաճելի հիւր չեմ հասո՞ւ, . . ը՛հ, ես ձեզ մարդ ասողի . . . և նա թափով նստուց առաջ, բայց շարժւելու աեղ չգտնելով՝ խրանած անաստնի պէս այս ու այն պատից զարկւելուց յետոյ՝ վերստին յետ քաշւեց հետով, թիկունքը դրանը յենեց և մնաց կանգնած։

Վերասին զիսում էր մեղ խուզարկուի աչքերով, մէկն ու մէկի աելը յանկարծակի գրաւելու դիտումով։

Նայում էինք և մնաք, խօսք ու ծիծաղ չկտր, հիւանդը հեծեծում էր մեղմիւ՝ անթարթ աչքերն առաստաղին յառած և ուշ աշունը լալիս էր դրսում իր անմիտ արցունքը։

— Էյ, դու ի՞նչ ես ցըւել սցդտեղ, լուեց դրսից վերակացուի կոշտ ու խուզան ձայնը, Գրիշան իր թիւնքով վակել էր զրան վրայի փոքրիկ բացւածքը և հսկող աչքը չը կարողանում ներս նայել։

— Ոչինչ, ազօթում եմ քո արևշասութեան համար, պատասխանեց Գրիշան խայթու հեգնութեամբ։

— Նացիր, որ դարձեալ չերթառ կարցեր, աւելարցեց վերակացուն աւելի խստութեամբ։

— Փըշա . . . Գրիշան կատուի պէս վշատացրեց զրան բացւածքից, վերակացուն դլուին օրդեր, աշ ձեռքով օդի մէջ անցոյս շարժում արեց ու հեռացաւ։

Անկարելի էր Գրիշի հետ դլուխ թափել։

III.

Բանտառմ կեանքը կամաց կամաց մեջեց։

Սույումից, համբ ցասումից և տանջանքից զանգըւած լուռթիւնը, ինչպէս ամէն զիշեր, դարձեալ իշտամիր զլուխների վրայ, Այն ժամն էր, երբ կողանաւորի

անքնութիւնը յանցանք է, չդժայի շառաջը՝ դաւաղրութիւն, անքոյը՝ լմբոսառութիւն և բաց աչքը՝ բողոք: Ահագին մի հրէ և սև ու աղանդակ, որ հազար թաթունի ու անթխ ձիքաններ, լսելեայն սողոսկալով ներս թափանցեց, բանեց բողոք անկիւնները, բողոք խորչերը: Երա շունչը լաւում է պատերի տակից, վառարանի ծըսնելոյդից, դրան ձեղքերից, նոյն իսկ հաստ պատերի միջից. նրա հեքից սարդի ոստահն է դողդողում, լամպի պղտոր լոյսն է թրթռում և ստերներն են ցատկուառում:

Ոչ ոք չի անքում, չի ճշում. պէտք է մեղմիկ հեալ նոյն իսկ մեծ ցաւից :

Դանդաղ ու հաստատ, ինչպէս յաւիտենական անէծքը, քաղլում է վերակացուն միջանցքում:

Հիւանդը անքում է ընդհատ, ընդհատ... ջերմը խեղդում է նրան, ինչպէս լոռութիւնը՝ մեզ:

Խեղճ տղա...

Շէկ ու հարուսա մազեր ունի, որոնք ցաք ու ցրիւ փռւել են աղստա, մոխրագոյն բարձի վրայ՝ ինչպէս ցեխի մէջ ընկած մնտաքսի ոսկեփաղ փունջեր: Սիրուն ու բաց ճակատը փայտիւմ է տենդից. ծովի պէս կազոյտ աչքերը խոր են գնացել և հայեացքը ժապում է մի բանի, որ նա տեսնում է և մենք չենք տեսնում...

Քսան երեք տարեկան է.... և շաբաթը երկու անգամ պատերազմ բաց կարտեր էր ստանում պոստով: Եւ այդ կարտերի վրայ միշտ մի փոքրիկ թռչուն, որ կողով ծրար էր տանում հեռու հեռու կապոյտ երկնակամարի տակից, մի գեղանի աղջիկ՝ որ օդային համբոյր էր ուղարկում. մի կին՝ որ լալիս էր մնաւոր ծառի տակ, մի լճակ ուր լողում էր մի հատիկ ձիւնաթոյր կարսող լոիկ և վշտոտ:

Եւ միշտ հոսաւէտ, միշտ բուրալից այդ կարսերը բերում էին իրենց հեա մի ամբողջ ափեղերք սիրոյ, ինդութեան, երազների և... վշտի:

Եւ բողորի վրայ, որպէս մխացող վէրք՝ դատախազի կնիքը, որի տակ թօնում էին և' սէր, և' երազներ ու վառում էր վիշտ միայն:

Գիտէինք՝ հեռու, հեռու հիւսիսում մի նոյնպէս շիկահեր, նոյնպէս կազուաչեայ ու գեղանի աղջիկ էր սիրում նրան. և նա' էր ոսկեզօծում հեռու հորիզոնից ծագող արեի պէս իր սիրած երիտասարդի բանան ու անձկութիւնը:

Քսան երեք տարեկան էր... և յանցսմաքը հէնց այդ տարիքն էր, յափշտակութիւնների, վառ ցնորքների, գեղեցիկ խննթութեան այդ դիւթական տարիքը: Երկու տարուց ի վեր տապսում էր գատին, օրհնելով այն ճանապարհը, որ նրան տարագիր՝ կ'առաջնորդէր գէպի դաժան, անհրապոյր հիւսիսը. և այնուհետե՛... էհ, չք նա քսան երեք տարեկան էր, չքնաղ կոյսի պէս գեղեցիկ այդ երիտասարդը:

Նա հեգնում էր աքսորը: Եւ յետոյ ան ոսկեհեր կապուտաչեայ գեղուշին հետը կ'երթար թէկուզ աշխարհի ծագըրը:

Եւ մինչեւ այդ երջանիկ օրը, ամէն զիշեր, երբ բոլորը քնում էին, նա կամացուկ բարձի տակից նայում էր երազների և սիրոյ իր կարտերը, մէկիկ-մէկիկ նայում էր ժպատով, յափշտակութեամբ, համբուրում էր ջերմօրէն և երջանիկ ժպիտը դէմքին, քնում էր կարտերը կրծքին աղմած:

Այսմ բոցերի մէջ վառում էր գողարիկ երազներից հիւստած այդ մատաղ կեանքը:

IV.

Ոչ ոք չեր քնել :

Եւ անկարեի էր քնել, քանի այդ անիրաւ Գրիշան կանգնած էր դրան առաջ : Դիտէինք որ նա մի բան կ'անի, յիմարօրէն անսիրտ բան . կամ լամպը կը մարի պահապան զինւորին ստիպելով խուճապ բարձրացնել, կամ մեր վերմակները վրաներիցս կ'առնի դէն կը նետի, կամ ջուր կը ցանի վրաներս : Անօգուտ էր քնելու փորձ անել, քանի նա կանգնած էր, ու չզիտէինք ի՞նչպէս տեղաւորւել ազատելու համար : Հնար չկար :

Եւ անիրաւը մեզ պէս կծկելու համաձայն չեր, լայն տեղ էր ուզում ձգւելու համար :

Մեփւած էր դրանն ինչպէս ուրւական . կիսախաւաւը ու վատ լուլթեան մշջ այդ բարակ, երկար վզով, փոքրիկ գլխով, վառ աչքերով պատկերը մի ճիւաղ լինէր ասես, որ բանտի գիշերը դուրս էլ մզել իր ծոցից մեր տանջանքը թանձրացնելու համար : Նա երկար մնաց կանգնած, ապա ճարը կրած՝ կամացուկ նստեց աղբամանի վրայ, մերժելով սրա նրա հրաւերը իր կողքին կծկելու համար :

— Զուր... հեծնծաց հիւանդը :

Եւ ի զարմանս բոլորի՝ այդ ծոյլ Գրիշան թռաւ տեղից, ջուրը գտաւ բերեց, քնքութեամբ բարձրացրեց հիւանդի գլուխը, խմացրեց և նոյն զգուշութեամբ տեղաւորեց նրան : Սակայն չհեռացաւ հիւանդից, նայում էր ու մտածում . . .

— Մարդը բարի է, երբ քո վիճակումն է, ընկե՛ր, ասաց նա, դու ինձ տեղ կը տաս այս գիշեր :

Հիւանդը ժպտաց . . . նա համաձայն էր :

Գրիշան բարձրացրեց վերմակը և զգուշութեամբ պառկից նրա կողքին .

— Նե՛ղ է աւղերնիս, ընկե՛ր, բայց մի տրանջա՛, շարունակեց Գրիշան, երբ ջուր ուզեն՝ կողքս խթիր, այս խողերը կը քննեն, չնա լսի ձայնդ, էլի ես . . . ի՞նչ տաք է անիրաւը . . .

Այո՛, Վալօղիան շատ տաք էր . . . ու անթարթ նայում էր մի բանի, որ միայն նա՛ էր տեսնում :

Կամնիը լուից :

Աշունը լալս էր դրաում իր անմիտ արցունքը, և պահապանը քազում էր միջանցքում դանդաղ ու հաստատ, որպէս յաւիտնական տանջանքը . . .

V.

Լուսարաց էր :

Ոմէնքս զարթած՝ նայում էինք Գրիշային ու Վալօղիային, Նրանք տակաւին անկողնում էին ու անշարժ : Գրիշան բոլորովին փարեկ էր Վալօղիային . աշխ բազուկով նրա վտիտ իրանը զրկած՝ նա հանգիստ ու համաչափ չնչում էր Վալօղիայի այտերին ու ճակատին, ուր մազերի մի ոսկեգոյն փունջ խաղում էր այդ ուժեղ հեքի տակ :

Վալօղիայի աչքերն աւելի լայնացած, պաղ բիրերով նայում էին կողքի ընկերոջը այնպէս շեշտակի, ասես զարմացած թէ նա ինչո՞ւ է փչում իր երեսին : Ուսկեա փայլ մազերը դարձեալ փուած էին աղտոտ բարձի վրայ և գունաս շրթունքներին քարացել էր մի ժպիտ : Աշեռքով կրծքին սղմած պահում էր բաց կարտերի ամբողջ ծալքը ուր մի կարապ էր լոզում մուգ լճակի վրայ, մի թռչնակ նամակ էր տանում հեռաւոր սիրահարլին,

մի ջահէլ կին լալիս էր մենաւոր ծառի տակ, և ամէնից
վերը՝ գեղանի աղջիկն էր, որ համբոր էր ուղարկում
հեռու հեռու հորիզոններին:

Եւ Գրիշան չնչում էր, և չնչում ասես կեանք
տալու համար այդ գեղանի գէմքին, ուր սէր ու երազ,
վիշտ ու յոյսեր սառել էին յաւիտեան, անդարձ:

Վալօղիան մեռել էր ընկերոջ դրկի մէջ . . .

Միուել էր և նայում էր զարմանքով:

Լախացած աչքերը բռնել էին ամբողջ սենեակը. ո՞ր
կողմը դառնում էինք՝ նայում էին մեզ . . . մի քանիաը
գլուխները քաշ ձգեցին, ուրիշները՝ երեսները դարձրին,
ոմանք հեկեկացին:

Եւ աչքերը նայում էին, նայում էին . . .

Զարթեցրինք Գրիշավին:

Նա նստեց, աչքերը արորեց, շուրջը նայեց առանց
բան հասկանալու, ապա հայեացքը նստեց մեռածի վրայ:
— Վա՛, այս անաշխնը դեռ նայում է, սատց նա,
երեխ ինքն էլ չհանկանալով թէ ի՞նչ է ասում. նա դեռ
կիսաքուն վիճակի մէջ էր:

— Միուել է, վեր կաց այն կողմը քաշւի:

— Միուել է . . .

Եւ Գրիշան այս անդամ նոր ուշքի գալով, ուշադիր
նայեց իր կողքի սառը դիակին, նրա պաղած աչքերին,
ապա հանդարասութեամբ ոտքի ելաւ, ձեռքերը զիսի
յատեր տարաւ, ձգձգւեց ու երկար յօրանշեց . . .

— Երիկունը չուր ուղեց, ու հիմա մեռել է . . .
գնա՛ ու մարդուց բան հասկացիր, սատց նա ու զլուխն
օրօրիկով հեռացաւ մի անկիւն:

Եւ դրսում անմտօրէն լալիս էր ցուրտ, թաց
աշունը . . .

ՀԱՄՐԸ

Ուշ գիշերին ընդուա զարթեցի ահագին ճիշից :

Նայեցի խշտիխ վրայ և ականջ էի դնում:

— Մէկը խսխում էր, բառաջում, որպէս մորթւող
եղը, որի կոկորդը կորել են առաջին հարւածով և արիւ-
նը ժաղթքում է թաւ խորթոցով:

Զայնը գալիս էր հէնց իմ կամերի տակից :

— Բանափի գիշերացին խեղդող չարագուշակ լուռթեան
մէջ այդ ձայնը հնչում էր կատաղի կեկչներով, աղան-
դակ, վարի վերոյ, ասես բանտարկեալների երազները
թունաւորելու համար:

Մարդու ձայն էր սակայն. և խոպոս, խելագար
մոնցիւնի մէջ անորոշ կերպով լսում էր մի հատիկ բառ՝
«Վախինում եմ . . .»

Եւ այդ մի հատիկ բառը՝ պոռթկալով գուրս էր
զալիս մարդու կորրորդից՝ մերթ ինչպէս ացրի նեղ բերա-
նում հօնքբացող մրրիկ, մերթ ինչպէս ծեծւած շան
կաղկանձիւն, կամ քաղցած գայլի ցաւադին ոռնոց և
մերթ ինչպէս ժայռի նեղ խոռոչում քարերը ծեծող վը-
տակի հեծիծանք:

«Վախինում եմ . . .»

Սենեակիս աղտօտ, ախուր լամզը պլազում էր ծուխ
ու մուխ փախելով իր շուրջը և մի մուկ՝ կիսախաւար
անկիւնում հանդարա կրծառաւմ էր իմ չոր հացի մնա-
ցորդները, մերթ ընդ մերթ նայելով ինձ, իմանալու հա-
մար, թէ արդիօք չեմ պատրաստուում կօշիկ զիսին
նետել:

Ո՞չ, մուկն ինձ չէր զբաղեցնում:

Սրունքներս գրկած և գլուխս քաշ՝ ծնկներիս, կըծ-
կըւեցի անկողնիս մէջ և լարւած ուշաղրութեամբ ականջ
էի դնում ահաւոր ձայնին:

Իմ սենեակի ներքնայարկը կարցերն էր և այնտեղից
էր լսում խելացնոր ձիչը, որից սաներիս տակ տախ-
տակները դրնդում էին ու դողում:

Դրանս փոքրիկ բացւածքից նայեց պահապանը:

— Զարթեցրե՞ց ձեզ անիրաւը, ասաց նա պաշտօ-
նական բարեացակամութեամբ:

— Ո՞վ է:

— Համբը, յանկարծ խենթայաւ, վազվդում էր
քնած ընկերների վրայ ու այսպէս ճշում. բերին կարցեր.
հանգստացէ՞ք, քնեցէ՞ք, հիմա կը լոփ... վերակացու-
նելն այստեղ են, վերջացրեց նա անհոգ ճեռվ ու մեղմ
սուլելով՝ հեռացաւ:

«Վերակացուներն այստեղ են, հիմա կը լոփ...»

Ո՞չ, զուեց:

«Վախենում եմ...» վերստին ճնշւեց մի վայրկեան,
ընդհատւած ձայնը աւելի կատաղի, աւելի խելացնոր.
ու թւում էր թէ այդ ձիչը կոկորդից չի դուրս գալիս,
այլ պատառւած, բաց կրծքից: Ճնշւեցի, հոգիս սարսը-
ռաց, ինչպէս բռնւած թռչուն. բազուկներս աւելի պինդ-
սոլմեցին սրունքներս և ճակատա աւելի քաշացաւ ծնինե-
րիս. լամազ իր մրոտ բոցով արագ-արագ թարթեց խա-
ւարին, մուկը դադարեց կրծելուց ու պաղ, շւարոնն
հայեացքն ինձ ուղղած, կարծես հարցնում էր՝ «Եց
ի՞նչ է...»

Բարձրահասակ, գեղատեսիլ մի ծերունի էր այդ
չամր կոչւածը, նուրբ ալեխանն միրուք ունէր, երկար,
թաւիչ մաղեր, որոնք չնորհալի փունջերով իջնում էին

մինչեւ ուսերը ու ծածանւում պարանոցի վրայ: Նիհար
ու փոքր երկարուկ դէմքը, ակնւական, բարեձեւ քիթը,
այտերի չնորհալի իջւածքը ու բաց ճակատը նրան տա-
լիս էին ծերացած Քրիստոսի կերպարանք: Նշան, հեղ
աչքերի մէջ միշտ միսում էր մի մեղմ կրակ, որի գոլը
ասես մարդ զգում էր, երբ նա ըստ սովորութեան դէմ-
քը մօտեցնում էր խօսակցի դէմքին և շեշտակի նայում
նրան իր խօսքը համոզիչ դարձնելու համար:

Բանտարկութեան առաջին երկու ամիսը նա անդա-
դար խօսում էր իր անմեղութեան և աշխարհի անիրա-
ւութեան մասին, խօսում էր ամէնքին, ծանօթի թէ
անծանօթի մօտենում էր մաերմօրէն ինչպէս հին բարե-
կամ և առանց բարեի, առանց նախարանի, գանդատ-
ւում էր աշխարհից: Ու նրա ուժեղ, համոզիչ ձայնը
լսում էր անվերջ և ամէն տեղ, որսում՝ զբօսանքի ժա-
մերին, ներսում՝ առաւօտից երեկոյ՝ թէ լսող գանէր:
Անդամ գիշերները, երբ ամէնքը քնում էին, նա երկար
ու անքուն թաւալում էր իր տեղում, ապա կամացուկ
խթում էր քնած հարեւանի հողը, ով և լինէր նա և
պատմում էր, թէ ինքն անմեղ է, բայց դաւադիր, ան-
աստած մարդիկ ուզում են նրան կախել տալ, հոգին
կորցնել:

Ո՞վքեր էին այդ անողորմ դաւադիրները և ինչո՞ւ
էին ուզում նրան կորցնել, նա այդ ձիր ասում բնաւ. և
ոչ ոք չգիտէր: Բայց նա խորապէս հաւասացած էր, թէ
այդ դաւադիրները կան, մութ գործը հիւսւած է նրանց
ձեռքով և իրան կախելու են անպատճառ: Երբ նա խօ-
սում էր կախաղանի մասին, փորձում էր ներկայացնել,
թէ ի՞նչպէս պարանը իր կոկորդը կը նետեն և մարմինը
կը ձօնւի օդի մէջ, նա կերպարանափոխուում՝ ասես
եթերանում էր, ձայնը դաւնում էր աւելի կոկորդացին,

աւելի վշտու, և աչքերի մէջ միսացող բոցի փոխարէն պղպում էր մի պաղ, անհիւթ կրակ, որ կարծես մօտ էր մարդկու:

Եւ յետոյ յանկործ խսդառ լոեց ու համբ դարձաւ:

Այդ պատահեց մի առաւօտ, որի նախլնթաց զիշերը բանտում մի մարդ կախեցին: Ամրող այդ զիշերը մնաք տագրեցինք կախաղանի առասափը, և յաջորդ առաւօտ այդ շասափառ ծերունին անողէս լոեց, առես խոպատ մուսափառ խօսքի արւեստը: Բանտարկիալների, պաշտօնեանների բոլոր ճիպերը նրան խօսեցնել, միանդամայն անօդուտ անցան: Սկզբում ամէնքը կարծեցին, թէ դիտաւորնալ է, ծաղրեցին, կասակներ արին, քաշքացին, ի գուրք... նրա լուռնթան տակ ծածկւած մի անորոշ ու մութ բան կար, որ պղպում էր աչքերում, և որ ամէնքին ամօթանար դարձրեց:

Այսուհետեւ քազում էր բակում մնն-մննակ, միշտ զլուխը՝ քաշ, աչքերը յառած գետին թանկազին կորուստ վնարողի պէս և միայն չըթունքներն էին չարժուում հազիւ նկատելի ձեռվ: Ազօթում էր արդեօք, անիծում, թէ՝ օրնում, ո՞վ կարող էր ասել:

Համբ է, ասացին ամէնքը:

Եւ Համբ կնքեցին անունն ու մոռացան:

Ահա խենթացիլ էր ուշ գիշերին այդ անօրինակ Համբը, և առաջին անողամ՝ ամիսներից յետոյ, մի հաւափի բառ էր արտասանում. այն էլ այս սաղանցուցիչ, չարագուշակ բառը՝ «Վախենում եմ...»

Ինչից էր վախենում դժբագդը, կարցերի գմնդակ խաւարից, թէ՝ իր երեւակայած զարհուրելի անարդական մահից, որի վշտաղիչ պատկերը, ինչովս մի անձունի ձիւտը, իշխում էր նրա վշրւած հողու, նրա միթագնած երեւակայութեան վրայ: Ինչից էր վախենում... ո՞վ կա-

բող էր ասել, բայց նա շարունակում էր մի անորոշ մութ սարսափից մերթ բառաչկ ու մերթ խոխուալ ներքնայրկի թմններ խստարի մէջ:

Կարցերի դրան առաջ ոտնաձայներ լուեցին. վերակցուներն էին, ու խօսում էին ցասկու, ներվայն չետուրով:

— Ինչից ես վախենում, էյ, ծերուեկ, հարցրեց նրանցից մէկը առհարկի քաղցրութեամբ և աշխատելով իր ձայնին տալ քնքոյն կարեկցութեան եղանակ: մի վախեր, այ, մնաք պատեղ ենք:

«Վախենում եմ...» եղաւ պատասխանը:

— Լուիր, թէ չէ... հնչեց միւս վերակացուի ձայնը սպառնական ու կատաղի:

Սպառնակիքն անօգուտ անցաւ:

«Վախենում եմ...»

Եւ քանի զնում էր, Համբի ձայնը աւելի էր բարձրանում ու թմններանում, ելեէջները դառնում էին աւելի ուժգին, աւելի յախուռն ու այլանդակ. թւում էր, թէ ներքեւում, խաւարի մէջ ինչ որ աներնոյիթ էտիմներ նրան խեղդուում են, արորում կուրծքը, փշում ոսկորները ու մորթսատում մի բութ գանակով կամաց կամաց:

Վերակացուները վերսախն մի փոքր մուժուացին. ապա դուռը բացւեց շառաջիւնով, նրանք ներս մոռան. լուեց զարցացկու հայնոյանք, ճիչ ու խօսք, ապա հարւածի ձայններ, ոտքերի զրմափին, յետոյ մի ծանր բան թրմիոցով գեախն ընկաւ... նրան տապակեցին:

Չատակս դրնդաց. Համբը լոեց. դուռը շառաջիւնով փակեց, վերակացուները հեռացան. բանաը մնչեց. մուկը կրկին կրծել սկսեց հացիս պաշտըը. զրում բանտի կարին մի կատու մաւեց, նո կանչում էր արուին: Պահապան զինուորը հայնոյեց, կենդանաւ ձայնը խանդրում էր նրան լաւ ականջ դնել իր շուրջը:

Քա՛ր լոռութիւն

Դրուխս ցաւում էր այդ ճնշող լոռութեան ծանրութիւնից և կրծքիս տակ մի բան մնալմիւ մրմնջում էր, ինչպէս մօր ստինքը շրթունքներով վնասրող հիւանդերեխայ: Ի՞նչպէս քնել, երբ տախտակի մի փոքրիկ շերտ է բաժանում քեզ տանջանքից, որ անցոյս ու ցաւագին գալարումներով մերթ մանչում մերթ հեծեծում է սոքերիդ տակ:

.... Ու երեւակայում եմ խենթ ծերունուն երեսն ի վար ծեփւած յատակին, տրորւած, ոչնչացած. շքեղ մաղերն ու միրուքը արիւնազանգ ցեխի մէջ փուած, երկու ձեռքերով աչքերը ծածկած, որ չուսնի իր տանջանքի խօլական պատկերը—խաւար անկիւնից թարթող կարմիր աչքը դիւական. փակել է երեսը, գլուխը թաղել փոշիների մէջ, բայց տեսնում է զարհուրանքը և աչքերից արցունքը, պատուած ճակատից արիւնը ծորում է, թրջում հողը, ցեխ կազմում: Նա դէմքը արորում է այդ լողին զանդւածի մէջ, կուրծքը սզմում գեսնին, շրթունքները կրծոտում չճշալու համար . . . աղօտ կերպով զգում է, որ ճշալու հետեանքը լաւ չի լինում. զգում է և անկարող է լուել:

Կենդանի, անողորմ խաւարը չորս կողմի անկիւններից, պատերի ձեղքերից, ճկունների ու հաղար ու մի ճիւաղների հետ մի համել բառ է միմիայն շնչում՝ «Վախենում եմ . . .»

Եւ ճակատագրական բառը նորից հնչւեց:

Նախ մեղմ, այնքան մեղմ, որքան չորացած տերեւների խըստուկը շարժւող սողունի փորի տակ. յետոյ մի փոքր աւելի բարձր, որպէս նվլոցը բաղէի ճանկերի մէջ արիւնաքամ մեռնող թռչնակի:

«Վախենում եմ . . .»

Հնչւում է բառը մեղմիկ, վախկոս շնչիւնով. ծերունին կարծես խօսում է մայր երկրին, աղաչում է, որ ոչի չափ իր այդ խղճուկ մրմունջը, որպէս զի դուռը նորից բաց չանեն. ինչո՞ւ են բաց անում անիրաւները, «սա վախենում է» իր համար, մենմենակ, ո՞ւմ է վես տալիս . . . այ, նա կամացուկ, չատ կամացուկ կ'ասի՝ «Վախենում եմ . . .» կամաց էր չէք . . .

Այո՛, շատ կամաց, այնպէս, ինչպէս կը խօսէր գերեզմանում զարթնած մեռելը իր կողերը սղմող դագաղի ու խոնաւ մայր հողի հետ:

Այսպէս մի քանի բոսկէ միայն:

Ահա սարսափը՝ որպէս մի ահագին հրէշ պոկւում է խաւարից, սողալով մօտենում է նրան կամաց կամաց ու գաղտագողի, բարձրանում է մէջքին, արորում է թիկունքը իր սուր, չոր ծնկներով. ջարդում է ողնաշարը. մագիները ցցում է նրա պարանոցի բաց միսերի ըլը. մագիները ցցում է դլուխը, իրանը, նայում է մէջ, ու ծւատում արիւնտառում է մորթին: Ծերունին յետին ճիգով բարձրացնում է դլուխը, իրանը, նայում է շուրջը, հուռը, խաւարի մէջ թարթում է կարմիր աչքը կախաղանի բարձրութիւնից և մարդը անքում է սոսկումից ու ցաւից, ահագին ձայնով:

Եւ այդ ահաւոր, սրտամորմոք մոնշիւնը կրկին տարածւում է բանտի վրայ, զարկւում է բոլոր պատերին, գալարուում է բոլոր անկիւններում, հեկեկում է քամու հետ, քրքջում է, ունում և մարում է կատունների վրայ, մինչդեռ նրա յետից համնում է յաջորդ մըսունչիւնը աւելի ուժգին, աւելի խելացեղ, որպէս փըրփըրած ծովի մի նոր ալիք:

Վերակացուները դարձեալ խոնւեցին դրան առաջ. բանան ամբողջ իրար է անդել:

— Լուիր, գու պէտք է վերջապէս լուհս, թէ չէ . . .

ու վերակացուի ձայնը լուռում է սյս անդամ չոր ու անդորրի:

Քարացած ականջ ևմ դնում ու դողում ևմ յուղ-
մոնքից . ի՞նչպէս կ'ուզէի , որ նա լոփ , այդ դժբաղդ
ծերունին , իսպառ լոփ , որ դուռը բաց չանեն , ներս
չմանն անիրաւները :

— կը լոե՞ս , թէ չէ ...

Պատասխանը մի բառ է :

«Վախենում եմ . . .» ահագին , կատաղի պոռթկումն
մի ծով հառաջանքի , որից դոները դրնդացին :

Շունչս բռնւռում է . ուզում եմ ճչալ , լոիր , էյ ,
լոիր դժբա՛զու :

Դուռը բացւեց սակայն , և ի՞նչ խենթ շառացիւնով .
յետոյ ոտնաձայներ , հայհոյանք , ճիչ , խոխոոց . մէկին
խեղղում են , արորում , հարւածում ոտներով ու բը-
ռունցքներով , յետոյ մի ծանր բան գետին տառլուեց
ու ամէն ինչ լոեց :

Դուրս եկան . դուռը կրկին փակւեց :

Խորունկ , հոգեհան լոռութիւն :

.... Ու հիմայ ընկած է ծերունին երեսն ի վար հո-
ղերի մէջ , արիւնը ծորում է ճակատից , քթածակերից
ու բերանից , մազերն ու միրուքը ողջ թափտախւած են
լարծուն ցեփի մէջ , ու նա կուրծքը արորելով ընկած է
ու խօսում է , ինչպէս մեռելն իր դագաղին , մեղմիւ մըր-
մընջալով . նա գանդատառում է , թէ ինչո՞ւ երկիրը յայտ-
նեց «նրանց» իր դադանի ճիչը :

«Զէ՞ որ ես կամացուկ ասացի՝ «Վախենում եմ» , մա՛յր
երկիր , ա՛յնքան կամացուկ , որ դու միայն լսես , ապա
ինչո՞ւ եկան «նրանք» , ո՞վ լուր տւեց , տես ճակատո
ջարդեցին , արիւն է չորս կողմա , արիւն , արիւն . . .»

Եւ սպասում եմ . . . ականջ ևմ դնում բերանաբաց .

ահա նա նախ կամացուկ կը մրմնջայ , ապա աւելի բար-
ձըր , աւելի բարձր , վերջապէս ահազին ձայնով կը մը-
ուլնչայ՝ «Վախենում եմ . . .»

Ո՞չ , լոռութիւն է . . .

Այնպիսի լոռութիւն , որից բանան խել սարսում է :
«Ինչո՞ւ լոեց , ինչո՞ւ լոեց , Տէ՛ր , Աստւած , մրմնջում
են չրթունքներս , թո՞ղ հնչել այդ խելագար ձայնը
մեղմ , հաղիւ լսելի նվլվոցով , թո՞ղ գոնէ անքայ ցաւից ,
թոզ հառաջի կոկիծից , թո՞ղ անիծի , աղօթի , վերջապէս
ձայն հանի» :

Ո՞չ , նա լոռում է և այդ լոռութիւնը խեղղում է ինձ :
«Ինչո՞ւ լոեց , ինչո՞ւ լոեց . . .»

— Դուք դեռ չէք քնել :

Պահապանն էր .

— Լոեցէք , ինչո՞ւ լոեց ծերունին . կուրծքս լի էր
վախով , արցունքավ , ու զգացի , ինչպէս դողդողում է
ձայնս :

— Տէ՛ր , Աստւած , ինչո՞ւ լոեց . . . պիտի լոի՛ , ի
հարկէ , ախր զլուխներս տարաւ . . . խոմ չի՛ կարելի
այսպէս , բանս է . . . և պահապանը ուզում է հետանալ :

— Սպասեցէք , աղաջում եմ , ստացէք , ինչո՞ւ լոեց
ծերունին , սարսափելի է այսպէս , հասկանում էք , սար-
սափելի է . . . այդ տեղը այ՛ , իմ ստների տակ . . . և խ-
պառ լոեց . . . սարսափելի է . . .

— Ո՞վ է այդանկ , լուեց ներքելի վերակացուի
խիստ ձայնը . . .

— իւնթացիէլ էք ի՞նչ է , դարձաւ ինձ պահապանը
զայրացած , ի՞նչ էք ճշում , ներքեռում լսեցին , ուզո՞ւմ
էք ձեզ էլ տանին խենթ ծերունու մօտ . . .

Ես ճշացել էի . . .

Կարցերում ձայնը մարեց :

Համբը չի ճշում:

Կատուն վերստին կանչեց իր արուխն բարձր ու կըրքու ոռնոցով . լո՛ւռ , թշւառակա՞ն կենդանի , լո՛ւռ , ի՞նչ ես մոնչում , սէրը նղովք է , և կեանքը տառապանք , ի՞նչ ես կանչում արուխն ...

Բանտը լուռ է . դուրսը խաւար է :

Եւ կատուն կանչում է , կանչում ...

Կեանք թէ տառապանք , նա դադար չունի , նա վախճան չունի այդ կրքոտ , այդ անիծւած կանչը ...

ԾՈՎԸ ՏՆՔՈՒՄ ԵՐ

Այս գիշեր ծովը անքում էր այնպէս խորը ու այնպէս ծանր :

Ալիքները մերթ լալաղին ու զգոյշ՝ որպէս գաղանի սիրուց որբացած կրյա , մերթ թափով ու շառաչալից՝ որպէս ծեծւած հողմ , զարկւում էին բանափս պատերին , փշրում ու անքում անցուսօրէն : Ծովի խոնաւ չունչը այդ ցաւոտ անքոցի հետ բարձրանում էր վեր , վեր , լիզում էր նեղլիկ պատուհանիս թանձր երկաթները , ներս էր ընկնում , դողում , հեծկլտում մուալ կամարների տակ՝ ապա մարում էր հանդարաւ :

Եւ ամէն անգամ հովի թափից փոքրիկ լամպի աղօտ բոցը մեղմիւ թրթուում էր , պղտորուում , ծուխս ու մուր սրսկում իր շուրջը , ու կրկին հանդարաւում , ու պըլպըլում էր :

Ականջ էի դնում ու երազում անեզը ծովը հպարտ ահաւոր , ազատ ու խննիլ և նրա վրայ մի խորհրդաւոր , անօրինակ նուռ , որ ինձ տանէր , տանէր , տանէր չգիտեմ ո՛ւր . . .

Հակառակ պատի տակ պառկած հիւամնդը ձգւեց ու ցնցւեց . քամի՛երորդ անգամն էր , որ նա փորձում էր բարձրանալ . ի զո՞ւր . . . շղթաները աղտոտ վերմակի ներքե խուլ , բութ շառաչին արձակեցին , ասես մէկը սղոցում էր նրա ոսները . հիւանդը հանդարաւեց , աչքերը փակեց , միայն բերանաբաց ու ընդհատ ընդհատ հևում էր .

— Աո՛ւ . . . աո՛ւ . . . աո՛ւ . . .

Դողդոջ ու թոյլ հեծեծանք ականջիս տակ :

Կողքս պառկած միւս հիւանդն էր, մի փոքրիկ երեխայ, որ յանկարծ թուաւ նատեց անկողնում, անմբից բոցավառ աչքերը չորս կողմը դարձրեց, առա կրկն ընկաւ իր տեղում հեծեծալով :

— Առւ... առւ... առւ... վախենում եմ, հօրե՛ղբալր... քաշի՛ր ինձ քեղ մօտ... վախենում եմ...

— Մի վախիր, զա՛ւակս, այն ծովն է մոնչում, ծովն է հեկեկում :

Եւ ես քաշեցի նրա փոքրիկ անկողինը իմին մօտ, շրյեցի տաք ճակատը, գլուխը. մանուկը զւարթացաւ, վերմակի տակից հանեց փոքրիկ, վախտ ճեռքը, և մեկնեց ինձ: Ես բանեցի նրա ճեռքն իմ ափի մէջ և այդ փոքրիկ վախտ ճեռքը տաք էր, դողդողում էր ինչպէս բռնուած թռչնակ :

— Այսպէս լա՞ւ է... հարցրի ես երեխացին:

Ժապի մի գունատ վաղ խաղաց նրա շրթունքներին ու խկոյն մարեց:

— Քնի՛ր, զա՛ւակս, քնի՛ր, վակի՛ր աչքերդ, ա՛յ, այդպէս:

Նա վակեց աչքերը, ևս նկատեցի սակայն, որ կոպերը թրթուում են. նա անքուն էր, նա վախենում էր:

Մի շաբախ առաջ նրան բանա բերին իր կոյր հօր հետ: Յանցագործ չէր. (Երեխան երբէք յանցագործ չէ). Հայրը՝ կոյր երաժիշտ, աշխարհում իր զաւակն ունէր, այս փոքրիկը, և վաստակի, ասլրուասի համար՝ իր Բանդուրան (1): Որդին նրա ճեռքից բռնած՝ առաջնորդում էր ու նրանք թափառում էին գաւոտից՝ դաւառ, քաղաքի՛ քաղաք, գիւղից՝ գիւղ, թափառում էին ու

(1) Բուսական նւագարան.

մի կատը հաց վաստակում: Հայրը լաւ նուագել գիտէր իր Բանդուրան, իսկ որդին՝ ժպտում էր այն անոյշ ժըպտում՝ որ միայն վշտու մանուկներն ունին, անծալր ու խորունկ ժպտի՝ որպէս հեռաւոր աստղի փայլը:

Անցագիր չունէին. «Ի՞նչ պէտք է անցագիր, ասել էր հայրը, զոյգ կոյր աչքերս մի՛թէ յաւիտենական անցագրեր չե՞ն մեղ համար...»

«Ո՛չ, կուրութիւնը բաւական չէ, անցագիր է պէտք», ասել էր հեռաւոր քաղաքիր մի ոստիկան և այժըմ՝ հայր ու որդի տարագիր բանտարկեաների հետ ու նրանց պէս տարւում էին բանտէ-բանտ՝ մինչև կը հասնեն հայրենի գաւառը:

Ե՞րբ կը հասնեն....

Եւ ահա փոքրիկը հիւանդացաւ:

— Նրան բերին ինձ մօտ, տինդում էր. այդ վիսրուն մարմինը առաւօտից սկսած՝ բոցերի մէջ վառւում փոթոթւում էր: Գիշերւայ հետ մի մութ սարսափ իջաւ նրա վրայ— բանտի անորոշ սարսափը, որ թանձրանում է հիւանդութեան մղձաւանջով: Մանուկը վախենում էր ու սղմուում դէպի ինձ:

Դրան փոքրիկ ծակից փալեց վերակացուի աչքը. ապա նրա ոսնածաճները կամացուկ հեռացան ու լուսին միջանցքի խորքում:

* * * Ծովը վերատին հառաչեց ու մոնչաց ծանր ու կրկար. բանտը հիմքից դղրդաց. քամու մի ուժգին հոսանք վազեց նեղ միջանցքով, անմոօրէն հաջեց բողոք դոների առաջ ու լսեց: Լամպի բոցը վերատին դողդողաց ու պղտորւեց. շղթայակիր հիւանդը կրկն թափահարեց ոսները, ցնցեց իրանը, երկաթները շառաչեցին. մարդը փորձեց գլուխը բարձրացնել, ատամները հռուա-

ցրեց այնքան ուժգնօրէն, կարծես ուղում էր ակռաները
փշտի. զլուխը վար ընկառ ու սա սկսեց խռիսուալ:

Երեխան թռաւ նստեց, սարսափով նայեց տառա-
պող հիւանդին ու էլի աղմւեց գէպի ինձ:

— Հօ՛րեղբայր, վախենում եմ... նրանից եմ վա-
խնում... մեռնում է... մնուել լաւ չի... հօրեղբայր,
մօտ քաշի՛ր ինձ, շատ մօտ...

Ես էլ աւելի մօտեցրի ինձ նրա անկողինը, է՛լ աւե-
լի պինդ սղմնցի ափիս մէջ նրա փոքրիկ վտիտ ձեռքը,
որ այրում ու թրթռում էր ինչպէս բռնւած, խղճուկ
թռչուն:

— Զի՞ մեռնում, զաւակս, մի՛ վախիր, նա էլ հի-
ւանդ է մեղ պէս:

— Ո՞չ, մեռնում է, հօրեղբայր, աչքերը աեսա՞ր...
նայեց ինձ, սարսափելի են աչքերը... ատամները կըր-
ձըսեց... լսի՛ր, ինչպէս, խոխուում է... վախենում եմ...

Ես միւս ձեռքս նրա ճակատին դրի.

— Փակի՛ր աչքերդ, փոքրիկս, այս այդպէս, դէ՛
քսիր... ես ձեռքս ճակատիդ կը պահնմ, լաւ է այդպէս,
էլ չէս վախենում...

Մանուկը ժպտաց իր հեռաւոր աստղի ժպիտը, ապա
աչքերը գոցեց, բայց փոքրիկ ձեռքը թրթռում էր իմ
ափի մէջ, ինչպէս բռնւած թռչնակ:

*

Ես էլ մնացի անքուն, աչքերս անթարթ և խոր-
հում էի...

Ու իմ խռները սև էին, ինչպէս այս զիշերը և փո-
թորկոտ ու ալեկոծ, որպէս ծովը, որ անմիտ ու յամառ
զարկում էր բանափ պատերին, տնքում, փշուում ու
կրկին զարկուում:

Լո՛ւս կաց, ծո՛վ, լո՛ւս, հանդարտոմի՛ր, զուր Են ճի-
դերդ, բանաը չի խորամակուի, քանի որ նա մարդկային
հոգուց է գուրս ժայթքել կազմ ու պատրաստ, նրա կա-
ռուցւածքի, ճշգրիտ պատկերն է. լուռ կաց, ծո՛վ, լո՛ւս,
հանդարտոմի՛ր...

Մասծում էի այս հրնիսայի մասին. ընդամենը ուլթ
դարուն էր բոլորի այդ մասղաշ ճակտով և արդէն նա
ճաշակել էր աշխարհի մածագոյն դառնութիւնը — բան-
ար շվթաների ու տառապանքի, բանար ոճերների ու
մահւան. ճաշակել էր այդ բոլորս, որովհետեւ կոր հօրն
էր առաջնորդել կեանքի նղովւած ճամբաներուու:

Եւ այն միւսոք՝ այն հոգեվարք հիւանդը... որի դրլ-
խի վրայ մի խղճուկ լամզ մուր ու ծուխ է արձակում,
թարթում է, հոկում է կատարում, որպէս մահւան պըզ-
ատր աչքը:

Ով է նա, ինչ ազդեց, ինչո՞ւ է բանտում, շվթայ-
ւած, չգիտեմ, չգիտեմ. գիտեմ միայն, որ իմ տառա-
պանքի հզբացն է և մեռնում է շվթաների մէջ, ահա-
զին աղամարդ է, բայց քամեկ, կմախոք է դարձել և
չորացած մարմինն այնպէս ծգւել է, երկարել. օօ՛, թէ
յանկարծ կանզնի... սարսափից կը ճշամ, թուխ, մըրկ-
ւած դէմք ունի. ոսկին կպահ մաշկը վաղիլում է
տենդի ուժգնութիւնից, մանաւանդ ճակատի վրայ. խոր
ընկած աչքերը փակ են ու նրանց շուրջը կազմւած լայն
ու խոռոշը, գուրս ընկած այտերն ու ծնօտը յստակօրէն
ուրւագում են կմախքացած մահը: Միայն կուրծքն է
տակաւին բարձր ու ցածր լինում և շրթունքները
դողդողում են երբեմն:

Երեք օրից ի վեր հոգեվարք է, մեռնում է մաս-մաս
և ելքը օրից ի վեր շարունակում է պայքարել մահւան
դէմ: Մերթ ընդ մերթ նա մի յատին ճիգով բարձրա-

ցնում է իրանը, ձգձգելով բոլոր ջիւերը, ցնցում է ոտները, ձեռները տարածում է օդի մէջ ինչ որ բռնելու շարժումով, աչքերն ահազին ու խոժոս դարձնում է շուրջը, մի բան է մռմռում ատամների արանքից, ապա անյուսօրէն խորտակուում է ու խոխուում, հեռում:

Վերակացուն դարձե ալ անցաւ միջանցքից . նրա բիրը վերասին սպաղ փաղ արձակեց դրան փոքրիկ ծակից . յիտոյ սպահապան զինւորը բակուում երեք անգամ սուր հնչեցրեց սուլիչը . ապա ամէն ինչ լուեց :

Զէր լուում միայն ծովը :

Հովը սաստկանուում էր : Հեռու ծովի խորքում հանգչով մրրիկն ասես ծեծում էին մտրակով, նա ձգձգւում էր, կատաղած գազանի պէս ինքն իրան կրծուում, կաղկանձում ու ենուում էր ոտքի : Հողմածեծ ալիքներն էլ չին տնքում, չին մրմիջում, ալ մոնչում էին, ահազին թափով նետուում դէպի բանաը, պատերը թենդայնում ու խորտակուում նրանց տակ :

Ու նրանց խօլ որսան օրօրուում էր ինձ միացող անուրջներով և նրանց զրոհը յարսւցանուում էր իմ կըրծքի տակ մրրիկի պէս անսանձ սմնդեր...

Եւ յանկարծ մաալ երկնքի տակ, փրփրադէղ ալիքների վրայ մի նաւ յայտնեց առագաստ բացած. և նրա մէջ ես եմ, մնն-մնաւի ես եմ ու տարւում եմ դէպի անյայտ, կախարդական ափեր:

Կայմը ծուում է ու ձոնչում փոթորկի հզօր հեքի տակ, առագաստները ճարճատում են իմ զիսի վրայ ու նաւը պանում է փրփորկի ամպերի միջից, չգիտեմ ուր, ու երջանիկ եմ...

Ել ես չեմ, նստողն ուրիշ է, մի առպետ, մի հսկայ, մազերը հողմածածան ու կուրծքը հովերին տւած, նա մի ձեռքով բռնել է կայմը, միւսը դէպի խաւար հորի-

գոնը մեկնած նաւում է ու խօսում է իր նաւին :

«Ալիքների մէջ նետեցի ես թալիսմանը բաղդիս, նրա համար մրրկւած է ծովի ամենի, ծովը խենթ . գնա՛ իմ նաւ, ալիքների ու ամպերի մէջ կախւած, գնա՛, անցիր այս փրփրուն անդունդների վրայով, ու թող նրանց հառաջանքը մեր յաղթական երգը լինի մենութեան :

«Ալիքների մէջ նետեցի ես թալիսմանը կեանքիս, ծովը փրփրեց . ծովը ուսաւ իմ յոյզով . ալիքների գոռ թափի տակ նուուխ հեքը թանձրացաւ, կայմը ցաւով կուանում է ճռնչում. գնա՛ իմ նաւ, դէպի հեռուն ամսամած, ուր որ ծեծւած մրրիկներն են մոնչում, ուր խաւարը ամպերի պէս դիզանում, բարձրանում...»

«Խաւար հեռուն փարս չկայ . այն մրրիկը մարեց, ու առագաստո ծւէն-ծւէն ամպերի մէջ շալլեց . ալիքներն էլ նաւիս զեկը դագաղի պէս խեցին, կայմս մնաց երկնքի դէմ բռունցքի պէս կարկառուն, կամքս մնաց ու հաւատս՝ երազներիս յենարան :

«Երազներ ունիմ, ողջ ոսկեգօծ՝ արշալոյսի չողերի մէջ մկրտւած . խաւարն ինձ ինչ... ճակտիս տակ ես խոհներ ունիմ այնպէս պայծառ, որպէս ցողքը աստղերի, ու հոգուս մէջ հզօր յոյզեր, գոռ ցասումի հոցի մէջ՝ որպէս երկաթ շիկացած :

— «Աիի՛... ի... ի... իի՛...

«Ո՞վ է լալիս այս կատաղի ու խենթ ծովում փոթորկւած . ո՞վ է լալիս այսպէս անյոյս, ես սանձել իմ մրրիկը . ոէգ մազերս հողմին տած ու ցնցուղները ճակտիս, ես փոթորկի կատաղութիւնն եմ սանձել . գնա՛ իմ նաւ, տար ինձ հեռու, անյայտ ափեր, ուր էլ ոչ ոք չի լալիս, ուր էլ ոչ ոք չի անքում :

— «Աիի՛... ի... ի... աիի՛...

«Հու՛, այդ վիրաւոր ճայն է ճշում ջրերում . փո-

թորիկը նրա թեհն է խորտակել ու նա անյոյս թրաղրառում
է վիրաւոր, թրաղրառում է ու ձչում է յատին ճիշջ օրհա-
սի, առողիտին ի՞նչ... ևս սահնձել եմ խենթ մրրիկն ամե-
հի, ևս փոթորիկ կատաղութիւնն եմ սահնձել... զնա՛,
իմ նաւ, ծովին եմ նետել թալիամանը իմ կիանքին»:

Ա՞չ, նոու չկայ, ասպետ չկայ, ծով չկայ:

Վիրաւոր ճայը չի լալիս, երեխացին նվկոցը գարդեց-
րեց ինձ լուսաբացին: Փոքրիկ հարեւնո՞ կիսամերկ,
սրունքները՝ բաց, մաղերը՝ ցաք ու ցրիւ գլխին, աչ-
քերում՝ սարսափ, կծկեկ էր դրան առաջ ու վայում
էր: Պատի տակի հոգեվարք հիւանդը մահեց ասես խու-
սափելու մի յիտին ճիգով դուրս էր նետել անկողնից,
մերկ, քրքրուած ոտներն ահազին շղթաներով քաշ էին
ընկել անկողնից, մինչդեռ մարմնի վերին մասը մնացել
էր վեր՝ բարձր վրայ, նա իր երկու ձեռքի եղունգները
ջղաձգօրին թագել էր բաց կրծքի մէջ, աչքերը չուած,
բրանը ծուռած. նա էլ չէր չնչում, չէր խոխուում,
չէր ցնցուում:

Մինչեւ ես ուշքի կը գայի, մինչեւ որ իմ դիւ-
թական երագից՝ այս դաժան իրականութեանը կ'անցնէի,
դրսից դուռը շառաչիւնով բացեց:

— Ի՞նչ ես առաջներա վակել, շա՞ն ձագ, ասաց մի
կոչտ ձայն, և մի հղօր ձեռք շարտեց երեխացին, որ
գնաց ընկաւ դիակի վրայ:

Մանուկը զարհուրանքից խելագար՝ աղիկառուր ճիչ
արձակեց և տնկուած ծաղկի պէս, փուեց մեռելի ուս-
ների վրայ ուժաթափի: Եւ մինչդեռ ես ոտքի թռայ,
խեցի նրան, իր անզը զրի ու աշխատում էի ուշքի
բերել, օգնականն երկու վերակացուների հետ մօտեցաւ
դիակին, կանգ առաւ, նայեց, ձեռքը նրա ճակատին

դրեց, յետ քաշւեց, կրկին նայեց.

— Հըմ. ո. ըհ... մեռած է... այս', մեռած է.
խօսք չկայ... հա...

— Պարո՞ն օգնական, ասացի, այս հիւանդ երեխան
վախենում է մեռելից, թէ հրամացէիք մի ուրիշ սենեակ
տանել:

Նա պատասխանի փոխարէն ինձ նայեց շեշտակի ու
երկար. ապա համարեց.

— Մէկ, երկու, երրորդը՝ մեռած...

Ու ձեռքի կաւիճով դրան վրայ գրեց՝
«Երկուսը՝ ողջ, մէկը՝ մեռած...» առաւօտեան
ստուգումը վերջացաւ:

Դուրս գնացին, գուռը շառաչիւնով փակւեց:

Երեխան կամաց, կամաց ուշքի եկաւ. ու գլուխը
ձեռքերիս մէջ առած ողմնցի կրծքիս, հայրարար ու
լողիս էի մանկան պէս, և չգիտէի, ում վրայ եմ լազիս,
այս փոքրիկի՞, որ քնքոց ծաղկի պէս դեռ չքացւած
մարում էր կեանքի խորշակից. մեռածի, որ էլ ցաւ ու
յոյզ չունէր, թէ իմ սեփական կիանքի, որի թալիու-
մանը ծովն էի նետել, ու մրրիկն էլ դադար չէր առնում:

Եւ ծովը դարձեալ անքում էր, անքում էր....

ՅՈԳՆՈՒԹԻՒՆ

Հիւանդ եմ:

Ճակատս այրւում է ու գանկս՝ անքում:

Դուրսը խաւար է, գիշերն է լալիս. ո՞վ սպաննեց
լոյսերը . . .

Լամպին պղտոր, արմաշող բոյը, որպէս սիրելու
դամբանի վրայ արցունքից յոդնած աչք՝ բոսոր ու ցա-
ւոտ, պղպում է յամրոքէն, նաև տարտամ ու անյոյս
օղակներ է կազմում մրտա ապակու մէջ և մէջքը ջար-
դած օձի պէս՝ տեղ է փնտրում գլուխը դնելու :

Յոդնել է մահու տամնջանքից :

Մաղձոս ծուխը թունաւորել է նրա վճիռ չունչը և
սև մուրը նրա ճաճանչներն է խամրել :

Յոդնել է բոյը հոգեվարքի պայքարի մէջ ու տեղ է
փնտրում իր տանջւած գլուխը դնելու :

Վիրաւոր, հիւանդ լոյսը մեռնում է մողմիւ և
ստերները — լուռ յուղարկաւորներ — դողդողում են
սպասերի վրայ :

Հիւանդ եմ, ճակատս այրւում է ու գանկս արն-
քում :

Վերմակս՝ բոցերից հիւաւած, լափում է ինձ. ո՞վ
վիրաւորեց լոյսը . . .

* *

Դեռ բզզում է այն փոքրիկ միջատը . . .

Առաւոտից ներս ընկաւ ինձ մօտ՝ աշնան վերջին
թիթեռը :

Եւ առաւոտից նա մի անկիւն է փնտրում մեռնելու
համար :

Այսպէս յոդնել է . . .

Բարձրացաւ դէպի առաստաղը-սարդի ոստայն կար
այստեղ, խոյս տւեց. կ'ուղէր խաղաղ մեռնել, այնպէս՝
ինչպէս մեռնում են վերջալոյսի շողերը: Ցած իջաւ,
անկիւնները պրատեց, մօտեցաւ մահճակալիս, իմ բոց
ճակատի վրայ պտոյսներ գործեց ու վերտան խոյս տւեց
ցաւագին բղղոցով:

Խեղճ...

Մահը թիկունքին իջնելու տեղ չուներ ու լալիս էր...
Յոդնած էր հոգեվարքից :

Ճրագը վառւեց. նա նետւեց դէպի կարմիր լոյսը:
Նա այնքան էր լողացել արեի ոսկէ շողերի մէջ:
Մեռնի՛ շողերի մէջ....

Պտոյսներ է գործում արիւնոտ բոցի շուրջը և մահ
է աղերսում:

«Լսի՛ր, ո՞վ սքանչելի դուստր երկնային հուր լու-
սատուի, մրմնջում էր նա—իր լուսածին մայրը մի օր իր
ստեղծագործող ժալով դուրս քաշեց ինձ խաւարի ծո-
ցից, ու թրթռացի բուրալից ծաղիկների վրայ, նրանց
զիցի նեկտարը ծծեցի և լոյսը չնչեցի ծով եթե-
թերթիկների նեկտարը ծծեցի և լոյսը չնչեցի ծով տակ-
րում. ծաղիկները մեռան աշնան հովերի ցուլու չնչի տակ-
և լոյսի շողերը գունասուեցին ու հանգան: Յոդնել եմ,
և լոյսի շողերը գունասուեցին ու հանգան: Յոդնել եմ,
չատ եմ յոդնել, յետ առ ինձ և թող լուծեմ քո բոց
զրկի մէջ, համբուրիք ինձ, համբուրիք . . .»

Եւ վիւաւոր, հիւանդ լոյսը երերում է ու պղպում,
նա սնջօր է մի յետին համբոյրով մոխիք գարճնել նրան:

Եւ թիթեռը բզզում է, լալիս է մահան համար:

**

Կուսամուախ տակ գիշերն է լալիս հեծեծանքով և
նրա ծոցում, քար լուսիթեան մէջ՝ ծառն է մերկանում
գերեզմանի համար:

Աչան հողմերը շատ են մտրակում անողորմ ու
կատաղի. և ահբեները՝ գունաս ու մեռելատիպ, դող-
դողում են սատերի վրայ:

Եւ ամէն մէկը դալուկ աչքերով ներքեւ է նայում,
իր գերեզմանը վնարում:

Յոդնել են, ցուրտ քամիները շատ են մտրակում
անողորմ ու կատաղի:

Հոգեվարը է, դաժան, անխուսափելի:

Ահա մէկը թռաւ, անդունդ է առաջը:

Ես լուսմ եմ նրա լալագին շնչանք. «Մայր իմ,
մայր, ի՞նչ ու է ներքեւ, ի՞նչ զարհուրելի . . .»

Ծառն օրօրում է զլուխը՝ «Անխուսափելի է, ան-
խուսափելի է . . .»

Եւ գիշերը զրկում է աերեւ, գուրգուրում է, լը-
ւանում իր արցունքով, պարուրում է խաւարից հիւս-
ւած ու պատանի մէջ և քնքութեամբ դնում է խոնաւ
գեանին:

Այսաեղ բոլորը գերեզման ունին:

Բնկան դարձեալ նորերը . . .

Եւ գիշերը շնչում է՝ «Էլի՛, էլի՛ . . .»

Քամիների տակ մերկացած ծառն էլ չի մը մնջում,
այլ սուր ու ցաւոս ճիչը է արձակում:

Ի զուր . . .

Բոլորն ընկան, բոլորը, յոդնած, հիւանդ ու ան-
դարձ:

Եւ լուսամուախ տակ գիշերն է լալիս, սև յուղար-
կաւորը բոլոր մահերի . . .

**

Դրսում մի կատու է նվվաւմ, հիւանդ, անտէր կատու:
Յիշում հմ . . .

Մանուկ էլնք և մննք նրան սպաննում էլնք:

Նա այնպէս հիւանդ էր, այնպէս փոքրիկ ու նիշար:

Եւ մենք նրան սպաննում էլնք, սրովհեան փոքրիկ
էր ու անդօր, սպաննում էլնք այնպէս ինչպէս մեր փոք-
րիկ, խաւար խիղճն էր թելաղրում:

Մենք փայտերով քրքրեցինք նրա մորթին, քարե-
րով փշրեցինք նրա թաթերը և ջարդեցինք մէջքը:

Զէ որ նա հիւանդ էր, նիշար ու փոքրիկ . . .

Եւ չի մեռնում, այլ նվվում էր ու նայում մեզ:

Մենք թաղեցինք նրան թանձր ցեխի մէջ, փոքրիկ
մարմին խապառ ծածկւեց, նա ել չի երեսում, միայն
ցեխի մակերեսովթն էր չսրմւում նրա ջղածիգ ցնցումնեւ-
րեց:

Նա չի մեռնում և ցեխի է գերեզմանում:

Ու յանկարձ ցեխը պատուեց, նրա փոքրիկ զլուխը
դուրս ցցւեց անձեւ, զարշելի ազրի մի զանգւած:

Մենք քրքջում էլնք . . .

Ապա ցեխակոյափ միջից բացւեցին նրա աչքերը,
զոյգ խոռոչներ, չուրջը ցեխ և ներաը՝ կանաչ ու պատոր:

Նա նայում էր մեղ լուսիթեամբ և աչքերը լայնա-
նում էլն:

Եւ աչքերի մէջ անձայր յոգնութիւն, երկար ու
ցաւոս հոգեվարքի յոկնութիւնը:

Նայում էր և աղերսում՝ «Շուտո, շուտ . . .»

Մենք չինք շատապում, այլ քրքջում էլնք:

Նա այնպէս անդօր էր և այնպէս ծիծաղելի:

Եւ աչքերն աղերսում էլն ցեխի միջից՝ «Շուտ,

շուտ . . .»

Հոգեվարքից յոգնած էր կատաւն:

* *

Գիշերն է լալիս ու գանկս անքում։
Օօ՛, ինչպէս անքում է խեղճ գանգս... մի ճիւտող
իր սուր մագիստրով չանգուռում, ծւատում է ուղեղս։

Սրիւնոտ բոցը յետին ճիգով թևեր է ձգում աջ ու
ձախ աներեւոյթ մահը գրկելու համար. թիթեռն անցոյս
ու նւաղած՝ դեռ վնասում է իր գերեզմանը. ծառը ճր-
չում է կատաղի հողմերի տակ, որոնք նրա բոլոր տե-
րեները փետեցին։

Խաւար անկիւնից կատուն նայում է ինձ իր կանոչ,
զարհուրելի աչքերով։

— Է՛յ, ո՞վ է այսաւդ։

— Ե՛ս եմ։

— Ո՞վ ես դու։

— Ես' եմ։

Եւ կիսախաւար անկիւնի մարդը ցնցւեց, տրորեց
աչքերը։

— Իմ խեղճ պահապան, դու գեռ անքուն հսկում ես.

— Այո՛, հրամայւած է։

— Հսկել հիւանդինն։

— Ստիպւած եմ... հրամայւած է, պարո՞ն... ինչպէս
յոգնել եմ, թոյն է մեր հացը։

Խեղճ մարդ... յոգնել է ու ստիպւած է հսկել, որ
իմ տեսդը որդի պէս սողայ երակներիս մէջ, վառի, լա-
փի արիւնա, մոխիր դարձնի սիրոս։

— Գիտե՞ս, երբ ես մեռնիմ, դու կը հանգստանաս։

— Ո՛չ, չեմ հանգստանար, բանտարկեալներ միշտ
կը լինին հսկելու։

— Ո՛չ, նա չի հանգստանայ, այն մոխրագոյն մարդը,
որ կծկւել է խաւարի մէջ և թարթում է իր անքուն

աչքերը տեսնելու համար, թէ ևս ի՞նչպէս եմ մեռնում։
Չի հանգստանայ, կը հսկի, կը հսկի, իր մի կտոր
թոյն հացը ուտելու համար։
Հրամայւած է...
* *

Սրիւնոտ բոցը վերջին անգամ բռնկւեց թրթուց ու
մնուաւ։

Թիթեռի բզզոցը լուց. նա գտաւ իր գերեզմանը.
ծառը կծկւեց ու սկւեց, տեղեւաթափ, մերկ, նա դողդո-
ղում է հողմերի տակ։

Գիշերն է լալիս, յաւխանական յուղարկաւորը բո-
լոր մահերի։

Ա՞վ սպաննեց լոյսերը.

— Է՛յ, պահապան, վակի՛ր այն աչքերը։

— Ի՞նչ աչքեր։

— Ա՛յ, այնահեղ, քեզ մօտ, չե՞ս տեսնում.. . երկու
աչք, կանաչ ու ցեխոտ. ինձ են նայում, ահագին, զար-
հուրելի աչքեր, օօ՛, կատուն իր լուսուխը բարձրացրեց
ցեխուրի միջից, չի ուղում մեռնել, նայո՞ւմ է, նայո՞ւմ
է. լսի՛ր, իմ պահապան, հսկիր լինձ, որքա՞ն կ'ուզիս,
բայց աղաջում եմ, վակիր սցդ աչքերը...

— Զե՞մ կարող.

— «Զե՞մ կարող» ասի՞ր։

— Այո՛, չեմ կարող։

— Ի՞նչո՞ւ։

— Վախենո՞ւմ եմ։

— Զարկ սաքով թո՞վ զլուխը վերատին ցեխի մէջ
թաղւի, չէ քո սաքերն ուժով են և կրունկդ՝ հաստ։

— Վախենո՞ւմ եմ...

Երկսով էլ յոզնած ենք, երկսով էլ անքուն :
Ինձ տենդն է խեղդում, նրան մի պատառ հացի
հոգով. թունաւո՞ր հացի...

Եւ երկսով էլ վախնում ենք կատի կանաչ, սպա-
նիչ աչքերից, որոնք խաւարի մէջ փաղփղում են, որ-
պէս կենդանի սոսկում :

Ահ, իմ անքուն տառապանքն է այն ու դարանա-
մուտ սպասում է, որ ցաւը օձի պէս երակներիս մէջ
սողայ, թունաւորի, լափի արիւնս :

— Էյ, պահապան, փակի՛ր այդ աչքերը:
— Վախնո՞ւմ եմ....

* *

Լուսաբաց էր, արեի մի շող ընկաւ լուսամուտից
ու խաղաց ճակախ :

— Գիշերը տենդի մէջ շատ խօսեցիք, պա՛րոն,
կատի աչեր էիք տենդում, կանաչ, ահապին, ասաց
պահապան :

— Կատի աչքե՞ր... զարմանալի է. ինչո՞ւ յատկա-
պէս կատի աչքեր :

— Տենդի մէջ պարո՞ն, տենդի մէջ մարդ հաղար ու
մի բաներ է տեսնում :

Այ, մի անդամ ես տենդել էի ու տեսայ մի ահա-
պին օձ, որ աշխատում էր փաթաթւել իմ վզին, ես ճը-
չում էի, թրպրառում, ու չի կարողանում աղատել,
ի վերջոյ փաթաթւեց, նրա պաղ օղակների մէջ ես կծիկ-
կծիկ գալարուում էի. զարհուրմիլի՛ էր...

Էլ Աստած գիտէ, կեանքն ել իո մի ահապին օձ
է, որ վիզերիս է փաթաթւել ու աղատել չենք կարո-
ղանում :

Եւ ծեր պաշտօնաթող զինուորը խորտւնկ ախ քաշեց :

ՑԱՆԿ

- | | |
|-----------------------------------|------|
| 1. Մահւան ճանկերում | Էջ 7 |
| 2. Հայրը | 17 |
| 3. Շղթաներ | 27 |
| 4. Ճակումի գիշերը | 42 |
| 5. Եւ դժուում՝ աշունն էր լալիս... | 60 |
| 6. Համբը | 69 |
| 7. Ծովը անքում էր | 79 |
| 8. Յունութիւն | 88 |





18. 491